# ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Լ. ՏԱՐԻ ԹԻՒ 06 (1456) ՇԱԲԱԹ, ՓԵՏՐՈՒԱՐ 27, 2010
VOLUME 30, NO. 06 (1456) SATURDAY, FEBRUARY 27, 2010

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՍԴՀԿ-ՀՅԴ-ՌԱԿ ՄԻԱՑԵԱԼ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Սիրելի՛ հայրենակիցներ,

Ապրիլ 24, 2010-ին կը լրանայ Հայկական Ցեղասպանութեան 95-րդ տարելիցը:

Հայ ժողովուրդին եւ մարդկութեան դէմ Թուրքիոյ կողմէ իրագործուած ոճրագործութեան հետեւանքները այսօր ալ կը յամենան: Արդարութիւնը տակաւին չէ յաղթանակած:

95 տարի շարունակ հայրենազրկուած, պատմական հայրենիքին մէջ Ցեղասպանութեան ենթարկուած հայութիւնը հետապնդած է իր արդար դատը: Պայքարի երկար ճանապարհին մեր ժողովուրդը կրցաւ կազմակերպուած ուժի վերածուիլ՝ հաւատարիմ մնալով ազգային արժէքներուն, հայրենիքին, իր լեզուին եւ մշակոյթին: Հայկական գաղութներուն մէջ բացուած իւրաքանչիւր դպրոց, եկեղեցի, մշակութային կեդրոն յաղթական քայլ եղաւ մեր նպատակներուն ուղղութեամբ:

Անցնող տասնամեակներուն Սփիւռքը կրցաւ համախմբուիլ Ցեղասպանութեան միջազգային ճանաչումին, կորուստներու հատուցումին, Հայրենիքի գաղափարին շուրջ եւ յաջողութիւններ արձանագրեց:

Խորհրդային ամբողջատիրութեան տարիները Հայաստանի մէջ ապրող հայութեան համար նոյնպէս հայրենիք վերադարձի, ինքնութեան հաստատման, սերունդներու իրաւունքի գիտակցութեան ժամանակներ եղան: Հայրենի հայութեան այս կեցուածքը՝ կայանալու եւ յաղթանակի ճանապարհ հարթեց Հայաստանի անկախութեան հռչակումէն յետոյ:

1965 թուականէն սկսեալ՝ ցեղասպանութեան ճանաչումի աշխատանքներէն յետոյ, Արցախեան հերոսամարտն էր, որ վերջնականապէս ապացուցեց հայութեան միասնականութեան անխորտակելի ուժը, Հայ Դատի ամբողջականութիւնն ու կենսունակութիւնը: Հայաստանի անկախ Հանրապետութիւնը կայացաւ ազատագրական յաղթական պատերազմի եւ համահայկական ներուժի գիտակցութեան շնորհիւ: Արժեւորենք այս փաստը: Մեր ազգի աննախադէպ յաղթանակներն արդիւնք են Հայոց պետականութեան եւ հայկական Սփիւռքի համատեղ աշխատանքին:

Մեր ժողովուրդը այսօր դարձեալ մեծ մարտահրաւէրներու առջեւ է: Աննախադէպ են զարգացումները հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորման, արցախեան հիմնախնդիրը արագ հանգուցալուծելու առումով: Կրկին հայ ժողովուրդի անանց արժէքներուն, մեր սերունդներու իրաւունքներուն հաշւոյն օտարի շահերը բաւարարելու փորձ կը կատարուի: Բարեբախտաբար հայութիւնը սկսած է գիտակցիլ Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ ստորագրուած արձանագրութիւններու քօղարկուած ու բացայայտ սպառնալիքները: Տակաւին վտանգուած է նաեւ Արցախի հերոսական ժողովուրդի արիւնով ձեռք բերուած ազատութիւնն ու անկախութիւնը:

Միւս կողմէ՝ Ջաւախքի հայութիւնը զրկուած է մարդկային տարրական իրաւունքներէն, որոնք ամէնուր ինքնին բնական եւ հասկնալի են:

Մենք՝ համահայկական երեք կուսակցութիւններս, համոզուած ենք, որ միմիայն համախումբ ջանքերով, խոհեմ ու վճռական քայլերով կը կարենանք աշխարհի մէջ ձեւաւորել Հայոց ազգային-պետական շահերը հաշուի առնելու, մեր իրաւունքները յարգելու գիտակցութիւն: Մենք համոզուած ենք, որ միմիայն միասնական ջանքերով, ամենօրեայ աշխատանքով հնարաւոր է լուծել համազգային խնդիրները. ջաւախքահայութեան իրաւունքներու, Արցախի անկախութեան, Ցեղասպանութեան միջազգային ճանաչման եւ Հայաստանի Հանրապետութեան հզօրացման կենսական հիմնահարցերը: Հայաստանի պետական-հասարակական կեանքին մէջ Սփիւռքի իրական ներգրաւուածութիւնը կրնայ դառնալ մեր միասնականութեան ամրապնդման կարեւոր գործօն:

Այս տարի Հայոց Մեծ Եղեռնի 95-ամեակն է: Կը մօտենանք մարդկութեան պատմութեան մեծագոյն ողբերգութիւններէն մէկուն 100-ամեայ տարելիցին: Հայկական Ցեղասպանութեան միջազգային ճանաչումին եւ հատուցման պայքարը մեծագոյն նշանակութիւն ունի ինչպէս համամարդկային քաղաքակրթական արժէքներու, այնպէս ալ Հայաստանի անկախ պետականութեան անվտանգութեան առումով: Ցանցագործութեան անպատիժ մնալն էր, որ յետագային հնարաւոր դարձուց նմանատիպ ոճիրներու կրկնութիւնը:

Մենք վճռական ու վստահ ենք մեր արդար դատը յաղթանակով աւարտելու պայքարին մէջ: Մենք կոչ կ'ընենք ՀՀ իշխանութիւններուն, հասարակական-քաղաքական բոլոր ուժերուն, Սփիւռքեան բոլոր կառոյցներուն, հայ ժողովուրդի ապագայով մտահոգ բոլոր մարմիններուն՝ համախմբուելու համազգային խնդիրներու շուրջ, միասնական եւ կուռ դիրքորոշում ներկայացնելու ամբողջ աշխարհին, իրական քայլեր կատարելու Հայաստանի, հայկական Սփիւռքի, ընդհանրապէս հայութեան խնդիրները լուծելու, համազգային հարցերու շուրջ միասնական քաղաքական կամք ձեւաւորելու, աշխարհի մէջ մեր ինքնուրոյն եւ արժանապատիւ տեղը ապահովելու ճանապարհին:

Հայկական իրականութեան այս կարեւոր հանգրուանին մենք կը դատապարտենք այն բոլոր երեւոյթները, որոնք հայութեան կամքը կոտրակելու կը ծառայեն:

Այսօր արդէն բազմաթիւ պետութիւններ պաշտօնապէս ճանչցած են Հայոց Ցեղասպանութիւնը: Այլընտրանք չկայ՝ հայութեան բոլոր հատուածներու գործակցութեամբ, մեր անկախ պետականութեան հզօրացմամբ մենք պիտի հասնինք աշխարհի ու նոյնիսկ Թուրքիոյ կողմէ մեր Արդար Դատի ճանաչումին:

Այս է Հայաստանի Հանրապետութեան եւ հայութեան լիարժէք, անվտանգ ապագայի երաշխիքը:

**ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ**
**ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**
**ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԲԻՒՐՈ**
**ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ**
**ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**
**22 Փետրուար 2010**

## ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՆԿՐԷՍԸ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԾՐԱԳԻՐ

*Փետրուար 23-ին կայացած մամլոյ ասուլիսի մը ընթացքին Հայ Ազգային Գոնկրէսի համակարգող Լեւոն Զուրաբեան յայտարարեց, որ Լեւոն Տէր-Պետրոսեանի ղեկավարած ընդդիմութիւնը կը պատրաստուի արտահերթ ընտրութիւններու:*

*Ըստ Զուրաբեանի, նկատի առնելով իշխանութիւններու ձախողութիւնները, քաղաքական բոլոր ուժերը պէտք է պատրաստ ըլլան արտահերթ ընտրութիւններու. - «Իշխանութիւնները, այո՛, ձախողուած են: Այդ ձախողման մասին ընկալումները արդէն տարածուել են իշխանական ճամբարի մէջ: Եթէ ձախողումները այս տեմպով շարունակուեն, իշխանութիւնը ուղղակի կ'ընկնի մեր գլխին, եւ պէտք է պատրաստ լինել դրան»:*

*Արտահերթ ընտրութիւններուն պատրաստուելուն զուգահեռ Հայ Ազգային Գոնկրէսը հրապարակեց Հայաստանի սոցիալ-տնտեսական քաղաքականութեան համակարգային վերափոխման իր ծրագրի 100 քայլը: Ըստ Գոնկրէսի, ծրագիրը յստակ քայլեր եւ լուծումներ կ'առաջարկէ Հայաստանի տնտեսութիւնը առողջացնելու եւ ապօրինի մենաշնորհներն ու արտօնութիւնները վերացնելու համար:*

*Ծրագիրը նպատակ կը հետապնդէ օլիկարխիկ համակարգէն, ուր տնտեսական միջոցները կեդրոնացած են մի քանի օլիկարխներու եւ անոնց սպասարկող ընտանիքներու ձեռքերուն մէջ, անցում կատարել մէկ այլ համակարգ, ուր հարիւր հազարաւոր մարդիկ պետական աջակցութեան պայմաններուն տակ պիտի զբաղուին գործարարութեամբ:*

**Շար.ը էջ 4**

## ՀԱԽ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԿԼԵՆՏԵԼԻ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏԻՆ ՀԵՏ

*Հայ Ամերիկեան Խորհուրդի ներկայացուցիչները վերջերս հանդիպում ունեցած են Կլէնտէլի նորանշանակ ոստիկանապետ Ռոնալտ Տէֆոմփայի հետ, քննարկելու համար բազմաթիւ հարցեր, որոնք կը վերաբերին հայկական համայնքին եւ ընդհանրապէս Կլէնտէլի բոլոր բնակչութեան:*

*Քննարկման առարկայ եղած է ոստիկանութեան կողմէ հետապնդուող նպատակները՝ հայ համայնքի հետ մօտէն յարաբերելու, ոստիկանութեան ուժերը աւելի ներկայացուցչական դարձնելու, նոր թեկնածուներ ներգրաւելու եւ ընդունմնան քննութիւնները բարելաւելու ուղղութեամբ: Քննարկուած է նաեւ խումբ մը հայ ոստիկաններու կողմէ վերջերս բացուած խտրականութեան դատը:*

*Ոստիկանապետ Տէփոմփա ՀԱԽ-ի ներկայացուցիչներուն ծանօթացուց ոստիկանութեան նոր ռազմավարութեան՝ ոճիրներու թիւը պակսեցնելու եւ այդ նպատակով նոր թեքնոլոժիներու օգտագործման մասին, որոնք պիտի նպաստեն աւելի արագ եւ ազդու միջամտութիւններ կատարելու:*

*«Մենք առիթ ունեցանք խօսելու ոստիկանապետին հետ ու փոխանցելու մեր մտահոգութիւնները եւ ստանալու սպառիչ բացատրութիւններ, թէ ի՞նչ քայլեր ձեռք կ'առնուին՝ համայնքի մտահոգութիւնները փարատելու նպատակով»,- հանդիպման մասին յայտարարեց ՀԱԽ-ի վարչութեան անդամ Փիթըր Տարագճեան:*

*«Որպէս Կլէնտէլի բնակիչ, հանդիպումը խիստ շահեկան էր եւ ունէր տեղեկատուական բնոյթ եւ ես վստահ եմ որ, ոստիկանութիւնը Տէֆոմփայի նոր ղեկավարութեան տակ բազմաթիւ բարելաւումներ*

**Շար.ը էջ 4**

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# ԻՆՉՈՒ ՉԻ ՅԱՋՈՂՈՒԵԼ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ

**Հարցազրոյց «Համագործակցութիւն յանուն ժողովրդավարութեան կենտրոն»-ի նախագահ Ստեփան Դանիէլեանի հետ**

***ԶՐՈՒՑԵՑ ՍԻՐԱՆՈՅՇ ՊԱՊԵԱՆ «ԼՐԱԳԻՐ»***



Պարոն Դանիէլեան, հարցուազրոյցների այս շարքի մասնակիցներն իրենց գնահատականն են տալիս տիրող իրավիճակին, որ Զիմբաբուէյից «լաւն» ենք, որ խորը ճահճում ենք եւ այլն: Իրավիճակին Ձեր գնահատականը:

*Իմ կարծիքով, Զիմբաբուէյի վիճակն աւելի նախընտրելի է, որովհետեւ Զիմբաբուէյում երիտասարդ ազգ է ձեւաւորւում, նրանց կարծրատիպերը հազարամեակների պատմութիւն չունեն, եւ հետեւաբար նոր գաղափարներն աւելի հեշտութեամբ կ՚ընկալեն: Եւս մի կարեւոր առաւելութիւն ունեն զիմբաբուէյցիները՝ նրանք չեն տառապում ազգային սնապարծութեամբ ու չունեն այդ սնապարծութեան սպեկուլյացիաների վրայ հիմնուած ազգային ինստիտուտներ:*

*Իմ կարծիքով, այսօրուայ խօսակցութիւնը պէտք է լինի պետութիւն կառուցելու կոնտեքստում: Մենք ինչպիսի՞ պետութիւն ենք ուզում, որից հետ երկրորդ կարեւոր հարցը՝ ինչպէ՞ս կարելի է դրան հասնել: Մնացած ամէն ինչը պէտք է ծառայի այդ գաղափարին, իսկ ինչը խանգարում է՝ անխնայ կերպով դէն նետուի: Որպեսզի այդ հարցերին կարողանանք պատասխանել, մենք պէտք է վերլուծենք մեր պատմութիւնը, որպէսզի հասկանանք՝ ինչու մեզ չի յաջողուել պետութիւն կառուցել, ինչն է խանգարել, ինչ պէտք է անէինք, որ չենք արել: Մենք պէտք է հասկանանք, որ մենք ձախողուած ազգ ենք եւ դրա պատճառները պէտք է մեր մէջ որոնենք, այլ ոչ թէ մեղքը գցենք նուաճողների վրայ:*

*Իմ կարծիքով, մեր պատմական ձախողման հիմնական պատճառները երեքն են՝ կենտրոնական իշխանութիւնը ոչնչացրած կենտրոնախոյս ֆեոդալական համակարգը, աշխարհիկ իշխանութիւնը ծրագրային կերպով ոչնչացրած մեր խւրայատուկ կղերական ինստիտուտը եւ բարձր համամարդկային (ես կ՚ասէի մարդկային) արժէքները «ազգային» հռչակուած անհասկանալի գաղափարներին հակադրելը: Միայն բարձր արժէքների վրայ հիմնուելով է կարելի ստեղծել պետութիւն, հասարակութիւն եւ կենսունակ կառավարման համակարգ:*

*Իմ կարծիքով, այսօր պատմութիւնը կրկնւում է: Զնայած դարերի տարբերութեանը՝ ամէն ինչ նորից վերադառնում է նոյն կէտին:*

*Մեր ամբողջ պատմութիւնը խեղաթիւրուած է, մեզ սուտ պատմութիւն են սովորեցնում դպրոցներում, եւ մենք պէտք է իմանանք իրական պատմութիւնը, որից յետոյ կարողանանք ուղղել իրավիճակը:*

*Եթէ ուշադրութիւն դարձնէք, ապա կը տեսնէք, որ նորմալ երկրներում պատմութեան դասագրքերում մի տող փոխելու համար մեծ քաղաքական դեբատներ են գնում, եւ դա խոշորագոյն իրադարձութիւն է համարւում: Վերջերս Յունաստանում շատ մեծ քննարկումներ էն գնում, որովհետեւ պատմութեան դասագրքում մի տող է աւելացուել, որտեղ ասուել է, որ Յունաստանի եկեղեցին խոչընդոտել է ազգային-ազատագրական պայքարին: Նոյնն է նաեւ Թուրքիայում. մի բառ փոխելու համար մեծ դեբատներ են ընթանում: Եւ երբ Աթաթուրքը ստեղծում էր պետութիւն եւ ըստ էութեան՝ թուրք ազգ, առաջին հերթին լեզուական բարեփոխումներն էին անցկացւում եւ դասագրքեր ստեղծւում: Այսօր Թուրքիայում պատմութեան դասագրքերում մի կէտ փոխելու համար մեծ դիսկուսիաներ են գնում, եւ դա համար մէկ քաղաքական խնդիրներից է, որովհետեւ յաջորդ սերունդն արդէն այդ դասագրքերի շնորհիւ այլ կերպ է մտածելու: Մեզ մօտ նման խնդիրներ դրուած չեն: Հակառակը, պատմութեան դասագիրքը կարելի է համարել հակապետական մտածողութեան կողաւորման գործիք:*

Հիմա մենք ո՞րն ենք անում՝ բարեփոխո՞ւմ ենք, վիրահատո՞ւմ, թէ ըստ էութեան ոչինչ էլ չենք անում:

*Այսօր Հայաստանում ֆեոդալական համակարգի ռեստավրացիա է իրականացւում: Մենք ունենք տարածքային ֆեոդալներ, պետական տարբեր ինստիտուտները մարմնաւորող ֆեոդալներ, ինչպէս նաեւ տարբեր ապրանքատեսակների եւ ծառայութիւնների ֆեոդալներ: Ունենք ալիւրի իշխան, շաքարաւազի իշխան, դատական համակարգի, դատախազութեան, մաքսային մարմինների իշխաններ ու կլաններ եւ այլն: Պետական ռեֆորմը պէտք է վերացնի ֆեոդալական համակարգը: Նրանց պէտք է փոխարինեն պետական ծառայողները, որոնք հաշուետու պէտք է լինեն մեզ: Եթէ ուշադրութիւն դարձնէք, կը տեսնէք որ կենտրոնական իշխանութեան ազդեցութիւնը գնալով սահմանափակւում է: Ֆեոդալներին փոխարինելն արդէն բարդ գործընթաց է: Մենք արդէն տեսնում ենք, թէ ինչպէս է վերակենդանանում միւս՝ պատմութիւնից ժառանգուած ինստիտուտը՝ եկեղեցին, որին արդէն ըստ ՀՌԱՀ նոր չափանիշների՝ նոյնիսկ չի կարելի այլեւս քննադատել: Պետականութեան երրորդ պատմական թշնամին բարձր համամարդկային արժէքների մերժման մտայնութիւնն է, որոնք հակաազգային են հռչակւում: Իրականում այն ամէնը, ինչը խթանում է զարգացմանը՝ պէտք է համարուի ազգային: Մեզ մօտ ճիշդ հակառակն է:*

*Ցանկացած երկրում ամենառացիոնալ կառոյցը կառավարութիւնն է համարւում: Մեզ մօտ ճիշդ հակառակն է. վարչապետը պետականութիւնը լղոզող ինչ-որ աբսուրդային, իռացիոնալ գաղափար է քարոզում, որը անուանում է «հայկական աշխարհ»: Եթէ նման մտքեր յայտնէր որեւէ բանաստեղծ, նկարիչ կամ թէկուզ հրապարակախօս, դա կարելի էր համարել որպես հետաքրքիր մտավարժանք, բայց երբ նման մտքեր է յայտնում վարչապետը, ես վախենում եմ մեր ապագայի համար:*

*Հայաստանի հեռուստաեթերում, մամուլում խօսակցութիւնները գնում են ոչ թէ ժամանակակից եւ կենսունակ ազգ լինելու, այլ յետամնաց, հին ազգ լինելու, ադաթներ, աւանդոյթներ ունենալու մասին: Այսինքն՝ սա ինքնաոչնչացնող աշխարհայեացք է: Եւ այս առումով ես ասում եմ, որ Հայաստանում նոր քաղաքական ուժը պէտք է անի այն, ինչ ժամանակին Թուրքիայում արել է Աթաթուրքը: Եւ ցանկացած քաղաքական նոր ուժ պէտք է նոր դիսկուրս ձեւաւորի: Այսօր Հայաստանում չեմ տեսնում քաղաքական ուժ, որը նոր դիսկուրս, նոր աշխարհայեացք, նոր մտածողութիւն, պետական եւ հասարակական տերմինների նոր ինտեպրիտացիա առաջարկի: Նոր քաղաքական ուժի համար մէկ խնդիրը պէտք է լինի նոր դիսկուրսի ձեւաւորումը:*

Պարոն Դանիէլեան, ներկայում նախաձեռնութիւններ կան, քննարկումներ, որոնց մասնակցում էք նաեւ Դուք, մի՞թէ դրանք Ձեզ հաւատ չեն ներշնչում:

*Քննարկումներն անհրաժեշտ են, շատ լաւ է, որ կան, բայց դեռեւս դիսկուրսը չկայ: Ով ձեւաւորի դիսկուրս, նա կը տիրի եւ նա կը լինի նոր հայկական պետականութեան ճարտարապետը: Իսկ քննարկումները պէտք է որոշակի արդիւնքի հասնեն, եւ այդ արդիւնքները դրուեն հրապարակային քննարկման: Եւ, իհարկէ, պէտք կը լինեն ուժեր, լիդերներ, որոնք որտեղ պէտք է՝ համոզելով, բացատրելով, իսկ եթէ պէտք լինի՝ կացնային հարուածներով ռեֆորմներ իրականացնեն:*

Բայց որտեղի՞ց լինեն, նրանք կա՞ն մեր իրականութեան մէջ:

*Իմ կարծիքով, սաղմերը կան: Երբ պահանջը հասունանում է, մարդիկ միշտ գտնւում են:*

Իսկ, ըստ Ձեզ, պահանջն այսօր հասունացե՞լ է, ժողովուրդը գիտակցո՞ւմ է:

*Ինձ համար ժողովուրդը կեղծ կատեգորիա է: Ժողովուրդը ձեւաւորւում է հասարակութիւն, ազգ, պետութիւն, որոնք արդէն քաղաքական կատեգորիաներ են: Երբ ժողովուրդը հիմնւում է որոշակի արժէքային համակարգի վրայ, ձեւաւորւում է կենսունակ եւ զարգացող կառավարման համակարգ, ստեղծւում է մշակոյթ, վերածւում է ազգի: Վիկտոր Հիւգոն ժամանակին ասում էր, որ Ֆրանսիան 500 մարդուց է բաղկացած: Այդ հզօրագոյն մշակոյթ ունեցող երկիրը 19-րդ դարի վերջում, ըստ նրա, ընդամէնը 500 մարդուց էր բաղկացած: Եւ եթէ այսօր Հայաստանում նման 10 մարդ գտնուի, մենք կարող ենք ասել, որ Հայաստանն արդէն ապագայ ունի: Այսինքն՝ խնդիրը պէտք է շատ նեղացնել, կոնկրետացնել՝ ով կրում է միտք, նա կարող է պարտադրել: Ըստ իս՝ մենք պէտք է լինենք ժամանակակից պետութիւն՝ առաջաւոր մտածողութեամբ, առաջաւոր տեխնոլոգիա ստեղծող: Ֆինլանդիան այսօր շատ փոքր բնակչութեամբ երկիր է՝ 4-5 միլիոն էլ չկայ, բայց տեխնիկական առումով աշխարհի ամենաառաջաւոր մտքեր, նորարարութիւններ ստեղծող երկիրն է: Ի դէպ, այդ նորարարական կենտրոնները գտնւում են գիւղերում: Ամէն գիւղում 4-5 ինժեներ նստած համաշխարհային նշանակութեան գիւտեր են անում: Ինձ թւում է՝ հայերն այն ժողովուրդն են, որ կարող են դրան հասնել: Ուղղակի կան հոգեւոր եւ մտային կապանքներ, որ դասագրքերից սկսած, վերջացրած հեռուստատեսութեամբ, մեզ ներարկւում են: Այդ կապանքներից մենք պէտք է ազատուենք: Քաղաքական ցանկացած նոր ուժի խնդիրն այդ կապանքները վերացնելը պէտք է լինի:*

Կարծես մեզանում այսօր փորձեր արւում են մտքեր ձեւաւորել:

*Փորձեր արւում են, սակայն ժամանակը սուղ է: Մեր բախտն այսօր բերում է նրանով, որ Հայաստանի իշխանութիւնները չեն որոշում Հայաստանի ճակատագիրը, այլապէս Հայաստանը վաղուց չէր լինի: Մեր բախտը բերել է, աշխարհագրական առումով Հայաստանը պէտք է, եւ Հայաստանին չեն թողնում կործանուի: Մենք դեռ կարծես թէ ժամանակ ունենք, մնացածը մեզանից է կախուած:*

Հնարաւո՞ր է, որ մեր գիւղերը Ֆինլանդիայի գիւղերի նման նորարարութիւնների կենտրոններ լինեն:

*Օրինակ բերեմ. շատ բռնապետական երկրներ գոյութիւն ունեն, որտեղ գիտական կենտրոնները, համալսարանները ազատ են, նրանք այլընտրանքի, այլ մտածողութեան, ազատ մտքի օջախներ են: Նոյնիսկ Ստալինի ժամանակ ֆիզիկոսներին շատ բան էր ներւում, որովհետեւ պետութեանը պէտք էր գիտութիւն, իսկ գիտութիւնը ազատութեան պայմաններում է ստեղծւում: Մտէք Հայաստանի ցանկացած բուհ. այնտեղ մտքի գերեզմանոց է: Այսօր համալսարանը դարձել է ամենայետամնաց ու պահպանողական կառոյցներից մէկը: Սա նշանակում է՝ մենք ապագայ չունենք: Կրթութեան նախարարը վերջերս գնացել էր համալսարան եւ ասում էր՝ ուսխորհուրդները պէտք է ծառայեն եկեղեցուն: Հանրապետականներին ծառայելը, պարզւում է, դեռեւս բաւարար չի: Նախարարը օրէնքների եւ սահմանադրութեան խախտում է կատարել ու իր պաշտօնի իրաւա-*

*Շար.ը էջ 4*

***ՄԱՍԻՍ*** ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**
Organ of the **Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**

1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**
**1060 N. Allen Ave.**
**Pasadena, CA 91104**

## ՀԱՅԱՍՏԱՆ

# ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԸ ՎՍՏԱՀԵՑՆՈՒՄ Է, ՈՐ ՃԳՆԱԺԱՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՒԱՐՏՈՒԵԼ Է

*Էկոնոմիկայի նախարար Ներսէս Երիցեանը վստահեցնում է, որ տնտեսական ճգնաժամը Հայաստանում աւարտուել է, եւ այդ ճգնաժամից՝ «մենք դուրս ենք եկել պատուով»: Ազգային վիճակագրական ծառայութեան հրապարակած տուեալներով, այս տարուայ Յունուարին, նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածի համեմատ 2.4 տոկոս աճ է արձանագրուել:*

*Փետրուար 22-ին լրագրողների հետ հանդիպմանը, ի պատասխան «Ազատութիւն» ռադիոկայանի հարցին, Ներսէս Երիցեանը նշեց, որ աճ են ապրել արդիւնաբերութիւնը եւ այն ոլորտները, որոնց ուղղութեամբ նախորդ տարի պետութեան կողմից ներդրումներ են կատարուել. - «Խոշոր (ներդրումներ) են իրականացուել ենթակառուցուածքների մէջ, որոնք չէին կարող իրենց ազդեցութիւնը տնտեսութեան դիւերսիֆիկացման եւ տնտեսական աճի ցուցանիշների վրայ չթողնել»:*

*Հայաստանի նախկին վարչապետ, ընդդիմադիր Հայ ազգային կոնգրեսի անդամ Հրանդ Բագրատեանը չի կիսում էկոնոմիկայի նախարարի լաւատեսութիւնը Յունուարին արձանագրուած տնտեսական աճի վերաբերեալ:*

*«Աճի հիմնական պատճառն այն է, որ անցեալ տարի Յունուարին ընդհանրապէս վատ է եղել: Այս աճն էլ է սուտ: Նման կարգի յայտարարութիւնների համար, թուերի համար ե՛ւ Ազգային վիճակագրական ծառայութեան պետը, ե՛ւ էկոնոմիկայի նախարարը պարզապէս պետք է քրէական հետապնդման ենթարկուեն: Աւելին, Յունուար ամսին, օրինակ, Ադրբեջանում 9,5 տոկոս է աճել», - նշեց Բագրատեանը: Նախկին վարչապետը նաեւ խօսեց անցած տարուայ տնտեսական ցուցանիչների մասին. - «2009-ին տարին փակուել է, իրենց յայտարարութեամբ, 14.4 տոկոս անկմամբ: Դա ԱՊՀ-ի ամենավատ թիւն է»:*

# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՐԱՏԱՒՈՐ Է»

*«Մեր բազմամեայ աշխատանքի արդիւնքում համոզուել ենք, որ սակագին վերանայել մեր երկրում նշանակում է սակագինը բարձրացնել»,- Փետրուար 22-ի ասուլիսում ասաց «Սպառողների միութիւն» ՀԿ նախագահ Արմէն Պօղոսեանը՝ անդրադառնալով Հանրային ծառայութիւնները կարգաւորող յանձնաժողովի գործունէութեանը: Նրա խօսքով՝ յանձնաժողովը որոշումներ կայացնելիս պէտք է դատաւորի դեր ստանձնի, այնինչ, որպէս կանոն, նրա կողմից որոշումներն ընդունւում են միաձայն: «Յանձնաժողովում ընթացակարգային եւ կազմակերպական առումով պէտք է փոփոխութիւններ կատարուեն»,- ասաց նա:*

*Պօղոսեանը նշեց, որ գազի գնի սպասուող թանկացումը հնարաւոր էր կանխել, եթէ ճիշդ օգտագործուէին մեր ռեսուրսները: «Մենք ունենք հզօր ռեսուրս՝ էներգետիկան, որի միջոցով կարելի է կոմպենսացնել լրացուցիչ ծախսերը, որպէսզի դրանք սպառողները չկրեն:*

*«Հասարակական պաշտպանների միութիւն» ՀԿ գործադիր տնօրէն Արամ Գրիգորեանը նշեց, որ թէեւ Հանրային ծառայութիւնները կարգաւորող յանձնաժողովը գազի գնի թանկացման նախաշեմին քննարկումներ է անցկացրել հասարակական կազմակերպութիւնների ներկայացուցիչների հետ, դրանք ձեւական բնոյթ են կրել: Նա համոզուած է, որ յանձնաժողովը սակագնի բարձրացման յայտը կ՚ընդունի եւ ներկայիս 96 դրամի փոխարէն 1 խմ գազի գինը կը սահմանի 132 դրամ:*

*Իսկ այն հարցին, թէ ինչու քննարկումների ժամանակ հասարակական կազմակերպութիւնները յստակ չեն ներկայացրել իրենց պահանջները, նա պատասխանեց. «Որովհետեւ «ՀայՌուսգազարդը» մեծ հզօրութիւն ունեցող կազմակերպութիւն է, իսկ միւս կողմը՝ սպառողը, չձեւաւորուած եւ թոյլ է: Մեր կողմից առաջարկութիւններ ներկայացնելու ընթացակարգը չկայ, մենք կարող ենք ներկայացնել, յանձնաժողովը նայի կամ չնայի, մենք չենք կարող դա անգամ բողոքարկել»,- նշեց նա:*

# ԹՈՒՐՔ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒ ԿԱՐԾԻՔՈՎ ՓՈԽՒՈՒՄ ԵՆ ՀԱՅԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ

*Հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորմանն ուղղուած գործընթացը, ինչպէս «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց Ստամբուլում գործող ազատական կողմնորոշում ունեցող երիտասարդական «Արի» շարժման առաջնորդներից Արդա Բատուն, «արդէն իսկ արդիւնք տուել է»:*

*«Անկախ այն հանգամանքից, թէ ինչ աւարտ կ՚ունենայ հայ-թուրքական յարաբերութիւնների նորմալացման գործընթացի այս փուլը, կարող եմ ասել, որ մենք արդէն իսկ արդիւնք ունենք, որովհետեւ թուրքական հասարակութեան ներսում փոխւում են հայերի ու Հայաստանի նկատմամբ եղած պատկերացումները», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց Բատուն, ով Ծաղկաձորում անցկացուող «Հայ-թուրքական մերձեցում» խորագրով քննարկման մասնակիցներից է:*

*«Այսօր Թուրքիայում շատ տաբուներ կոտրուել են ոչ միայն հայերի, այլեւ քրդերի առնչութեամբ: Քսան տարի առաջ կամ նոյնիսկ տասը տարի առաջ մեր հասարակութեան մեծ մասը որեւէ պատկերացում չունէր քրդական խնդրի վերաբերեալ: Մենք ուշադրութիւն չէինք դարձնում 1915 թուականին տեղի ունեցած զանգուածային սպանութիւնների հարցին: Սակայն հենց այդ տաբուները յաղթահարուեցին, եւ այս հարցերը սկսեցին ազատօրէն քննարկուել, հայերի ու Հայաստանի նկատմամբ պատկերացումները փոխուեցին, որովհետեւ այսօր, օրինակ, Թուրքիայի հասարակական կարծիքը հարց է բարձրանցնում, թէ ինչ է տեղի ունեցել անցեալում, որովհետեւ բաւականին երկար ժամանակ գոյութիւն ունէր ժխտման քաղաքականութիւնը:*

*«Բայց, իմ կարծիքով, Հայաստանի ու հայերի նկատմամբ առկայ պատկերացումների փոփոխութիւնը դեռ չի հասել նոր գնահատականներ տալու կէտին: Դեռեւս ընթանում է հարցերի բարձրացման փուլը, որը ինչ-որ ժամանակ անց իր յետեւից կը բերի պատասխաններ», - ասաց Արդա Բատուն՝ շարունակելով. - «Ինձ համար, եւ կարծում եմ հարցին քաջատեղեակ շատերի համար անակնկալ չէր, որ այժմ գործընթացը գտնւում է նման առկախ վիճակում, որովհետեւ այսպիսի փխրուն գործընթացները միշտ բախւում են որոշ արգելքների:*

# ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԵՐԹԻ ԺԱՄԱՆԱԿ ԾԵԾԿՌՏՈՒՔ Է ՏԵՂԻ ՈՒՆԵՑԵԼ ՈՍՏԻԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ




*Լեւոն Տէր-Պետրոսեանի գլխաւորած Հայ ազգային կոնգրեսի (ՀԱԿ) երիտասարդ ակտիւիստները 2008 թուականի Փետրուարի 19-ի նախագահական ընտրութիւնների երկրորդ տարելիցի կապակցութեամբ բողոքի երթ էին կազմակերպել Երեւանում:*

*«Լրացել է 2008-ի Փետրուարի 19-ին կայացած նախագահական կեղծուած ընտրութիւնների 2 տարին», - վանկարկում էին երթի մասնակիցներն ու պահանջում Կենտրոնական ընտրական յանձնաժողովի ողջ աշխատակազմի հրաժարականը:*

*Աբովեան-Սայաթ Նովա խաչմերուկում հրմշտոց եւ ծեծկռտուք տեղի ունեցաւ ոստիկանների եւ ցուցարարների միջեւ: Երբ ոստիկանները սկսեցին հրելով մարդկանց դուրս բերել փողոցից, երիտասարդները խաչմերուկի կենտրոնում նստեցին գետնին՝ հրաժարուելով հեռանալ: Ծեծկռտուքի ժամանակ տուժած ՀԱԿ-ի երիտասարդ ակտիվիստ Սարգիս Խաչատրեանը տեղափոխուեց հիւանդանոց:*

*Աւելի ուշ Հայ ազգային կոնգրեսի համակարգող Արման Մուսինեանը «Ազատութիւն» ռադիոկայանին փոխանցեց, որ երբ երթի մասնակիցները վերադառնալիս են եղել ՀԱԿ-ի գրասենեակ, պարեկապահակային ծառայութեան ներկայացուցիչները ոստիկանութեան մեքենայով անյայտ ուղղութեամբ են տարել ընդդիմադիր ակտիւիստներ Տիգրան Առաքելեանին, Վահագն Գէորգեանին, Սարգիս Գէորգեանին, Սերգէյ Գասպարեանին եւ եւս երկու ակտիւիստների:*

# ՀԵԼՍԻՆՔԵԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

*«Հայաստանում արմատացած ռազմաոստիկանական ռեժիմը շարունակում է ուժեղացնել այլակարծութեան եւ իր քաղաքական հակառակորդների դէմ պայքարի քաղաքականութիւնը: Հայաստանի իշխանութիւնները գործում են ամենակեղտոտ մեթոդներով՝ քաղաքացիների առեւանգում, հոգեբանական ճնշման գործադրում: Գործարար Սարիբէկ Սուքիասեանի նկատմամբ քրէական գործի յարուցումը հետապնդում է մէկ նպատակ՝ ճնշում գործադրել եւ պատժել Սուքիասեանների ընտանիքին իրենց քաղաքական հայեացքների եւ ընդդիմութեանը աջակցելու համար: Նմանատիպ մեթոդները վաղուց արդէն փորձարկուել եւ կիրառուել են Հայաստանում:*

*«Ընդդիմութեան երիտասարդ 6 ակտիւիստների անօրինական ձերբակալումը, որոնցից չորսը անչափահաս են, ոչ այլ ինչ է, քան քաղաքացիների առեւանգում «իրաւապահ» մարմինների կողմից՝ պետական մարմինների կողմից ահաբեկչութեան դրսեւորում:*

*«Հելսինքեան Ասոցիացիան պահանջում է. Անյապաղ դադարեցնել ընդդիմութեան նկատմամբ կիրառուող ամէն տեսակի անօրինական մեթոդների կիրառումը, համապատասխան մարմինների կողմից անյապաղ իրականացնել խախտումների վերաբերեալ փաստերի հետաքննութիւն եւ պատժել մեղաւորներին, Հելսինքեան Ասոցիացիան կոչ է անում միջազգային հանրութեանը շարունակել քաղաքական եւ տնտեսական ճնշումների գործադրումը Հայաստանի իշխանութիւնների նկատմամբ»:*

# ԼՈՒՐԵՐ

## RAND-Ի ՓՈՐՁԱԳԷՏՆԵՐԸ ՎՏԱՆԳՈՒԱԾ ԵՆ ՀԱՄԱՐՈՒՄ ԹՈՒՐՔ - ԱՄԵՐԻԿԵԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

*«Վտանգուած գործընկերութիւն. Թուրք - ամերիկեան յարաբերութիւնները աշխարհաքաղաքական գլոբալ փոփոխութիւնների դարաշրջանում», - այսպէս է կոչւում ամերիկեան ամենահեղինակաւոր վերլուծական կենտրոններից մէկի՝ RAND կորպորացիայի կողմից Վաշինգտոնում հրապարակուած ծաւալուն մենագրութիւնը: 150-էջանոց աշխատութեան մի մասը նուիրուած է հայ - թուրքական յարաբերութիւններին եւ դրանցում Միացեալ Նահանգների դերակատարութեանը:*

*RAND-ի վերլուծաբանների համոզմամբ՝ Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ յարաբերութիւնների կարգաւորումը դրական երեւոյթ է: «Հայաստանի համար երկկողմ յարաբերութիւնների բարելաւումը Մոսկուայից տնտեսական եւ քաղաքական կախուածութեան թուլացում կը նշանակի: Բացի այդ, Հայաստանը կարող է ընդգրկուել տարածաշրջանային տնտեսական ու էներգետիկ այն ծրագրերում, որոնցից դուրս է մնացել: Թուրքիայի համար Հայաստանի հետ յարաբերութիւնների բարելաւումը կարող է նոր լիցք հանդիսանալ Եւրամիութեանը անդամակցելու ճանապարհին», - նշում են ամերիկացի վերլուծաբանները՝ յաւելելով. - «Ամէն դէպքում, սխալ կը լինէր կարծել, որ հայ - թուրքական յարաբերութիւնների բարելաւումն արդէն իսկ իրականութիւն է դարձել: Երկու երկրների մերձեցումը որոշակի լարուածութիւն է ստեղծել Ադրբեջանի եւ Թուրքիայի յարաբերութիւններում: Բաքւում մտավախութիւն կայ, որ Անկարայի եւ Երեւանի միջեւ դիւանագիտական յարաբերութիւնների հաստատման դէպքում ադրբեջանական կողմը Հայաստանի վրայ ազդեցութեան կարեւոր մի լծակ է կորցնելու»:*

*Նշելով, որ Թուրքիան Հայաստանի հետ յարաբերութիւնների բարելաւումը շաղկապում է Ղարաբաղեան խնդրի կարգաւորման հետ՝ RAND-ի փորձագէտները գրում են. - «Մեծ է հաւանականութիւնը, որ այդ քայլը կը դժուարացնի Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ յարաբերութիւնների բարելաւման գործընթացը»:*

*Ամերիկացի վերլուծաբանների համոզմամբ՝ այս գործընթացին խոչընդոտող եւս մէկ գործօն է Հայոց ցեղասպանութեան ճանաչման մասին Միացեալ Նահանգների Կոնգրեսում շրջանառութեան մէջ գտնուող բանաձեւի նախագիծը: «Բանաձեւի ընդունումը կարող է լրջօրէն վնասել Օբամայի վարչակազմի՝ Թուրքիայի հետ յարաբերութիւնների ամրապնդմանն ուղղուած ջանքերը: Բանաձեւի ընդունման դէպքում Անկարան կարող է պատասխան քայլերի դիմել՝ որոշակիօրէն սահմանափակելով ամերիկացիների՝ Թուրքիայի տարածքում գտնուող ենթակառոյցներից օգտուելու հնարաւորութիւնները», - նշում են RAND կորպորացիայի մասնագէտները:*

*Նրանց համոզմամբ՝ Ցեղասպանութեան բանաձեւի ընդունման հաւանականութիւնը կ՚աճի, եթէ Թուրքիայում պաշտօնական Վաշինգտոնի համար անցանկալի ներքին զարգացումներ լինեն: Խօսքը, ըստ վերլուծաբանների, ռազմական նոր յեղաշրջման մասին է: «Եթէ զինուորականները կրկին միջամտեն քաղաքական զարգացումներին, ապա Ցեղասպանութեան ճանաչման մասին բանաձեւի ընդունման հաւանականութիւնը առաւել մեծ կը լինի: Բացի այդ, Կոնգրեսը կարող է պատժամիջոցներ կիրառել Թուրքիայի դէմ՝ արգելելով զէնքի վաճառքը այդ պետութեանը», - ասուած է RAND կորպորացիայի փորձագէտների վերլուծութիւնում:*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԿԱՐՈՂ Է ԸՆՏՐՈՒԵԼ ՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՑ ՀԱՄԱՊԱՏՐԻԱՐՔ



Պոլսոյ համապատրիարքի թեկնածուներէն մէկը՝ Գուգարքի թեմի առաջնորդ Սեպուհ եպիսկոպոս Չուլճեան

*«Պոլսոյ պատրիարքարանը չպէտք է խառնուի քաղաքականութեանը», - Թուրքական «Հիւրիէթ» թերթին տուած հարցազրոյցում ասել է Պոլսոյ համապատրիարքի ամենահաւանական թեկնածուներից մէկը՝ Գուգարքի թեմի առաջնորդ Սեպուհ եպիսկոպոս Չուլջեանը:*

*Համապատրիարքի ընտրութեան նախնական ժամկէտը Մայիսի 12 է: Այժմ Պատրիարքարանում սպասում են թուրքական իշխանութիւնների պաշտօնական պատասխանին, որից յետոյ հնարաւոր կը լինի ընտրութիւնների կազմակերպումը:*

*Սեպուհ Չուլջեանի առաջադրման մասին սկսեցին խօսել մի քանի ամիս առաջ: Այս շաբաթ ժամանելով Թուրքիա՝ Չուլջեանը ելոյթ է ունեցելՍտամբուլի ամենահին հայկական եկեղեցիներից մէկում՝ Կոջա-Մուստաֆա Թաղամասի Սուրբ Գէորգ եկեղեցում՝ յայտարարելով, որ իր ղեկավարութեան ներքոյ Պատրիարքարանը քաղաքականութեանը չի խառնուելու:*

*«Մենք այլեւս նման սխալներ կատարելու իրաւունք չունենք», - ասել է Սեպուհ եպիսկոպոսը:*

*«Հիւրիէթ»-ին տուած հարցազրոյցում Չուլջեանը գործող պատրիարք Մեսրոպ Մութաֆեանի առողջական վիճակի կտրուկ վատթարացումը կապել է «Ակօս» թերթի խմբագրապետ Հրանդ Դինքի սպանութեան հետ: 53-ամեայ Դինքը սպաննուել էր 2007 թուականի Յունուարի 19-ին Ստամբուլում:*

*«Դինքի սպանութեանը յաջորդած շրջանում Մութաֆեանն այնքան սպառնալիք է ստացել, որ դա չէր կարող չազդել նրա առողջութեան վրայ», - նշել է Սեպուհ Չուլջեանը:*

*Խօսելով 1915 թուականի իրադարձութիւնների մասին՝ Չուլջեանն ասում է. - «Արեւմուտքը օգտագործեց մեզ՝ Անատոլիայում իր նպատակներին հասնելու համար: Հայերը դարձան Արեւմուտքի եսակենտրոն քաղաքականութեան զոհը: Գերմանացիները գերադասում են լռել, թէեւ նրանք պատասխանատուութեան մեծ բաժին ունեն այն ամէնում, ինչ կատարուեց 1915 թուականին»:*

*Չուլջեանը նաեւ պնդել է, թէ կտրականապէս դէմ է հայ-թուրքական բանակցութիւններում որեւէ տեսակի միջնորդական առաքելութիւնների. - «Երկու ժողովուրդներից լաւ որեւէ մէկը մեզ չի ճանաչում, այնպէս որ արեւմուտքի պետութիւններին կոչ կ՚անէի աղ չցանել մեր վէրքերին»:*

## ԻՆՉՈՒ ՉԻ ՅԱՋՈՂՈՒԵԼ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ

*Շարունակուածէջ 2-էն*

*սութիւնները գերազանցել է: Պարզւում է, որ համալսարանը պէտք է ոչ թէ գիտութեան օջախ լինի, այլ ծառայի դոգմատիկ մի ինստիտուտի, որի ծառայողները բացայայտօրէն ասում են, որ գիտութիւնն իրենց թշնամին է:*

Դառնալ ժամանակակից, կարծում եմ, բոլորն են ուզում, ամբողջ հարցն այն է՝ ինչպէ՞ս:

*Դա անհնար է կղերաֆեոդալական պայմաններում: Լուծումը պարզ է. պէտք է համակարգը փոխուի:*

Ովքե՞ր դա պէտք է անեն:

*Հայաստանում հեռուստատեսութիւնը գրաքննութեան տակ է: Ազատ հեռուստատեսութիւն գոյութիւն չունի: Ըստ այդ տրամաբանութեան, Հայաստանում պէտք է գրաքննութիւն իրականացուէր նաեւ հրատարակչական ոլորտում: Սակայն գրաքննութիւն այդ ոլորտում դեռ չկայ: Դա շատ աննորմալ երեւոյթ է այն առումով, որ ցանկացած բռնատիրական երկրում գրքերը պարտադիր գրաքննւում են: Այսինքն՝ մեզ մօտ չեն ստեղծւում, չեն թարգմանւում գրքեր, որոնք վտանգաւոր են այս իշխանութեան համար: Դա նշանակում է, որ մեզ մօտ դեռեւս «ճիշդ» գրքեր չեն հրատարակւում:*

*Վերադառնալով հարցին, թէ ովքեր պէտք է դա անեն, ասեմ, որ նրանք, ովքեր պէտք է անեն, դեռեւս չեն անում: Սակայն գոյութիւն ունի մի առաւելութիւն: Մենք այսօր ունենք իշխանութիւն, այսօր մենք ունենք լաւ կամ վատ պետութիւն, եւ այդ պետական ինստիտուտները բոլոր դէպքերում զգում են վտանգը: Այդ ինստիտուտները գոնէ ինքնափրկութեան համար ռեֆորմների պահանջ կ՚զգան, որովհետեւ մի բան է, երբ պետութիւն չունես, մի բան՝ երբ պետութիւն ունես: Նման երկրներում ռեֆորմները հենց իշխանութեան համակարգից են սկսւում եւ պարտադիր չէ, որ հենց առաջին դէմքերը լինեն: Անգլիական, ֆրանսիական, հոլանդական, ամերիկեան յեղափոխութիւններն առաջաւոր պետական գործիչների աջակցութիւնն են վայելել:*

## ՀԱԽ

*Շարունակուածէջ 1-էն*

*պիտի կատարուին, ներառեալ ոստիկաններուն տալ տեղեկութիւններ, տարբեր ազգութեանց սովորութիւններու մասին, որպէսզի աւելի լաւ ձեւով կարողանան շփուիլ հայ համայնքին հետ»,- իր կարգին յայտարարեց ՀԱԽ,ի անդամ Վարդան Գոճապապեան:*

## ԹՐՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ԵՆ ՎԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

*Թուրքական իշխանութիւնները որոշում են կայացրել վերականգնել Վանի հայկական եկեղեցիները:*

*Anadolu գործակալութեան հետ հարցազրոյցում Վանի փոխնահանգապետ Հալիլ Բերքը յայտարարել է, որ նահանգապետարանի կողմից պատրաստուած նախագծով նախատեսւում է վերականգնել Վանայ լճի Զարփանաք կղզում եւ Իւքարըբաքրաչլը գիւղում (Վարագավանք) գտնուող հայկական եկեղեցիները:*

*«Վանայ լիճ ասելիս՝ պատկերացնում ենք Աղթամար կղզին: Սակայն Վանայ լճում Աղթամարից բացի եւս 3 կղզի կայ, որոնցից իւրաքանչիւրն ունի եկեղեցի: Մեր պատրաստած նախագծի շրջանակում այս տարուայ ապրիլից կը սկսուեն Զարփանաք կղզում եւ Իւքարըբաքրաչլը գիւղում գտնուող հայկական եկեղեցիների վերականգնման աշխատանքները»,- յայտարարել է փոխնահանգապետը:*

## ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՆԿՐԷՍԸ

*Շարունակուածէջ 1-էն*

*Այս նպատակին հասնելու համար Հայ Ազգային Գոնկրէսը կ՚առաջարկէ բարձրացնել օլիկարխներու հարկերը, մենաշնորհները վերացնելու նպատակով խստացնել պատժամիջոցները, արգիլել ներմուծող օլիկարխներու շահերուն ծառայող դրամի արժեւորումը եւ խրախուսել արտահանումը, ազգային հարստութիւնները վերադարձնել հանրութեան տնօրինման, վերանայիլ գազի, էլեկտրաէներգիայի գիներու անհիմն բարձրացումները, արգիլել պետական պարտքի կուտակումը, վերացնել կոռուպցիան եւ ստուերը, ամրապնդել աշխատաւոր քաղաքացիներու իրաւունքները:*

*Հայ Ազգային Գոնկրէսի համակարգող Լեւոն Զուրաբեան ըսաւ, թէ իրենք ուրախ կ՚ըլլան եթէ այսօրուայ իշխանութիւնները կարողանային այս ծրագիրը իրականացնել, բայց այդ իշխանութեան համար ինքնասպանութեան նման բան կը դառնայ:*

*«Այս ծրագիրը կարող է կատարել միայն այնպիսի զանգուածային քաղաքական ուժ, որը որեւէ պարտաւորութիւններով կամ կապերով կապուած չէ օլիկարխների հետ եւ չի սպասարկում նրանց շահերը», - յայտարարեց Լեւոն Զուրաբեան:*

## ԼՈՒՐԵՐ

# ԼԻԲԱՆԱՆ
# ԸՆՏՐԱԿԱՆ ՏԱՐԻՔԸ ՆՈՒԱԶԵՑՆԵԼՈՒ ՕՐԻՆԱԳԻԾԸ ՁԱԽՈՂԵՑԱՒ

*Լիբանանեան խորհրդարանը Երկուշաբթի հրաւիրուեցաւ քուէարկելու ընտրական տարիքը 18-ի նուազեցնելու օրինագիծը:*

*Այս օրինագիծը հաստատուելու համար անհրաժեշտ էր, որ խորհրդարանի անդամներուն երկու երրորդը քուէարկէր ի նպաստ օրինագիծին: Քաղաքական հոսանքներէն շատեր օրինագիծին դէմ վերապահութիւններ չունենալով հանդերձ իրենց վերապահութիւնը արտայայտեցին՝ ներկայ հանգրուանին զայն ներկայացնելու իմաստով եւ յատկապէս առանձին, այսինքն՝ արտերկրի լիբանանցիներուն քուէարկելու իրաւասութիւն շնորհող օրինագիծին բացակայութեան:*

*Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրիի կողմէ քուէարկութեան դրուեցաւ ընտրական տարիքը 18-ի նուազեցընելու օրինագիծը: 66 երեսփոխաններ մնացին ձեռնպահ, երեսփոխան Սերժ Թուրսարգիսեան քուէարկեց օրինագիծին դէմ, իսկ 34 երեսփոխաններ՝ ի նպաստ օրինագիծին:*

*«Դեմոկրատական հանդիպում» խորհրդարանական խմբաւորումի անդամ Մարուան Համատէ դիտել տըւաւ, որ ընտրական տարիքը 18-ի նուազեցնելու օրինագիծը ՝ արտերկրի լիբանանցիներուն ընտրելու իրաւասութիւն շնորհելու օրինագիծէն անջատ քուէարկելու քայլը Նեպիհ Պըրրիի կողմէ թոյլ տրուած լուրջ սխալ մըն է: Համատէ առաջարկեց մէկ քանի ամիսով յետաձգել քուէարկութիւնը, որպէսզի հնարաւոր ըլլար արտերկրի լիբանանցիներուն քուէարկելու իրաւունք շնորհող բանաձեւին հետ համատեղ քուէարկել զայն:*

*«Բարգաւաճում եւ ազատագրութիւն», «Հաւատարմութիւն դիմադրութեան», Ընկերվար Յառաջդիմական կուսակցութիւնը եւ երեսփոխաններ՝ Իմէտ Ալ Հուր, Նիքոլա Ֆաթուշ, Թամամ Սալամ, Ահմէտ Քարամէ, Նեժիպ Միքաթի, Մուհամմէտ Սաֆարի եւ Քասէն Ապտէլ Ազիզ քուէարկեցին ի նպաստ օրինագիծին:*

*Խորհրդարանը նաեւ ընտրեց նախագահներ, նախարարներ դատող գերագոյն խորհուրդի անդամները՝ Իպրահիմ Քանաան, Նիքոլա Ֆաթուշ, Սամիր Ճըսր, Ղազի Զըայթէր, Նիքոլա Պըսըն, Մուհամմէտ Ֆընէյշ, ընկեր Սեպուհ Գալփաքեան: Ապա տեղի ունեցաւ փոխ-անդամներու ընտրութիւնը՝ Նուար Սահելի, Նէյլա Թուէյնի եւ Մարուան Համատէ:*

# ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅԵՐԸ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ԿԸ ՊԱՀԱՆՋԵՆ ԻՐԵՆՑ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԷՆ

*Լիբանանի արտաքին գործոց նախարար Ալի Շէմին ատրպէյճանական* Trend *գործակալութեան տուած իր հարցազրոյցի ընթացքին յայտարարած է, որ պաշտօնական Պէյրութը Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման գործով կը պաշտպանէ Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը: Այս յայտարարութիւնը արդարացի վրդովմունք առաջացուցած է Լիբանանի հոծ հայկական համայնքէն ներս եւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Լիբանանի շրջանի ղեկավարութեան միջոցաւ յայտարարութիւն տարածած է, զարմանք արտայայտելով արտաքին գործոց նախարարի յայտարարութեան վերաբերեալ:*

## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

*Լիբանանի արտաքին գործոց նախարար Ալի Շեմիի՝ ազերիական «Թրէնտ Նիուզ» լրատուական գործակալութեան հետ ունեցած հարցազրոյցը կ՚ընդգրկէ բաւական վիճելի արտայայտութիւններ:*

*Ըստ »Թրէնտ Նիուզ« գործակալութեան կողմէ լոյս ընծայուած հարցազրոյցին, մեծարգոյ նախարարը ըսած է, թէ Լիբանան իր զօրակցութիւնը կ՚արտայայտէ Ատրպէյճանի հողային ամբողջականութեան, կը յարգէ անոր գերիշխանութիւնը եւ միջազգայինօրէն ճանչցուած անոր սահմանները, ու մեկնելով այս իրողութենէն կառչած կը մնայ հակամարտութիւններու լուծման միջազգային օրինականութեան տուեալներուն:*

*Յարգելի նախարարը նաեւ կը յայտնէ հակամարտութիւնները ու վիճելի հարցերը երկխօսութեան եւ միջազգային օրինականութեան սկզբունքներու հիման վրայ լուծելու անհրաժեշտութիւնը:*

*Կ՚ուզենք մեծարգոյ նախարարին ուշադրութեան յանձնել՝ «Թրէնտ Նիուզ» գործակալութեան լոյս ընծայած հարցազրոյցի արաբերէն եւ անգլերէն բնագիրներուն միջեւ գոյութիւն ունեցող բացայայտ տարբերութիւնը, որ ընթերցողը շփոթի կը մատնէ՝ նախարարին վերագրելով հայկական ուժերու կողմէ ազերիական հողեր »գրաւելու« մասին յայտարարութիւն մը:*

*Այս առիթով, կ՚ուզենք յարգարժան նախարարին եւ հանրային կարծիքին ուշադրութեան յանձնել, թէ անցեալ դարու 20-ական թուականներու սկիզբը, Ստալինի կամայական մէկ որոշումին հետեւանքով, Լեռնային Ղարաբաղի տարածութիւնը բռնօրէն կցուեցաւ Ատրպէյճանին: Հակառակ յաջորդող տասնամեակներուն ազերիներուն կողմէ կիրարկուած քաղաքական, մշակութային, ցեղային բռնութիւններուն եւ խտրականութեան, Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը պահպանեց իր ինքնուրոյնութիւնը եւ Խորհրդային Միութեան քայքայումէն ետք ան հռչակեց իր անկախութիւնը:*

*Կը փափաքինք նաեւ մեծարգոյ նախարարին ուշադրութեան յանձնել, թէ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման նպատակով կազմուած է ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակը՝ Ռուսիոյ, Ֆրանսայի եւ Միացեալ Նահանգներու համանախագահութեամբ:*

*Վստահ ենք, որ ազերիական գործակալութիւնը խեղաթիւրած է մեծարգոյ նախարարին յայտարարութիւնը՝ պատմական իրողութիւնները շրջանցելով հանրային կարծիքը մոլորեցնելու ակնյայտ դիտաւորութեամբ:*

***Ս.Դ.Հ.Կ. ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆ***
***ՓԵՏՐՈՒԱՐ 18, 2010***

# ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԷՋ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԱԾ ՊԱՇՏՕՆԱԹՈՂ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ



*Ստամպուլի դատարանը այսօր ամողջ օրուան ընթացքին կը շարունակէ հարցաքննել Երկուշաբթի լուսադէմին ձերբակալուած պաշտօնաթող զինուորականներուն: Զօրացուած գեներալներուն, ծովակալներուն եւ գնդապետներուն ոստիկանութիւնը ձերբակալեց չորս մեծ քաղաքներու մէջ՝ Անքարայի, Ստամպուլի, Պուրսայի եւ Իզմիրի իրականացուած գործողութեան ընթացքին: Ձերբակալուածներու մէջ կան ռազմածովային եւ ռազմաօդային ուժերու նախկին հրամանատարները, Ստամպուլի տեղակայուած 1-ին բանակի նախկին հրամանատարը:*

*Ոստիկանութիւնը կը պնդէ, որ զինուորականները 2003-ին ռազմական յեղաշրջում կը ծրագրէին նպատակ ունենալով տապալել Էրտողանի կառավարութիւնը: Այս ծրագրով կը նախատեսուէր երկրին մէջ քաոսային իրավիճակ ստեղծել՝ բանակի միջամտութիւնն ապահովելու համար: Մասնաւորապէս, պէտք է պայթեցուէին Ստամպուլի մզկիթներէն մի քանին, արհեստականօրէն պիտի սրուէին յարաբերութիւնները հարեւան Յունաստանի հետ: Իրենք՝ ձերբակալուած զինուորականները, կը պնդեն , որ որպէս յեղաշրջման ծրագիր ներկայացուող փաստաթուղթերը իրականութեան մէջ զօրավարժութիւններու ծրագիր էին:*

Hurrieyt Daily News *թերթի մեկնաբան Օզգուր Օզրիթի խօսքով. - «Վերջին մէկ ամսուան ընթացքին մենք անընդհատ նոյն բանը կը լսենք, այս սպային ձերբակալած են, միւսին հարցաքննած, խուզարկուած է Զինուած ուժերու գաղտնի հրամանատարական կէտը: Առաջին անգամ Թուրքիայի հանրապետութեան պատմութեան մէջ նման իրադարձութիւններու ականատեսը կը դառնանք: Որեւէ մէկը Թուրքիայի մէջ ի վիճակի չէ կանխատեսել, թէ ի վերջոյ այս ամէնը ինչ աւարտ կ՚ունենայ:*

*Անոր կարծիքով, վերջին ձերբակալութիւնները որոշակիօրէն կը տարբերին «Էրգենեկոնի» գործէն:*

*«Երբ կը հետաքննուէր «Էրգենեկոն» ցանցի գործունէութիւնը՝ մարդիկ իրաւացիօրէն կը տարակուսէին. եթէ այդ կազմակերպութիւնը յեղաշրջում կը նախապատրաստէր, ապա ինչու բացառապէս լրագրողներ ու համալսարաններու դասախօսներ կը կալանաւորուէին: Հանրութիւնը չէր հասկնար՝ իսկ ուրտեղ են այն զինուորականները, որ պէտք է իրագործէին յեղաշրջումը: Այս վերջին ձերբակալութիւններով կարծես ամէն ինչ իր տեղը կ՚իյնան, եւ հետաքննութիւնը որոշակի իմաստ ձեռք կը բերէ», - կը նշէ Օզրիթը:*

# ՖՐԱՆՍԱՅԻ ՎԱՐՉԱՊԵՏ ՖՐԱՆՍՈՒԱ ՖԻՈՆ ԴԱՄԱՍԿՈՍ ԱՅՑԵԼԵՑ

*Ֆրանսայի վարչապետ Ֆրանսուա Ֆիոն աւարտեց Սուրիա կատարած իր երկօրեայ այցելութիւնը: Ֆիոն հանդիպում մը ունեցաւ նախագահ Պաշշար Ասատի հետ եւ քննարկեց երկու երկիրներուն միջեւ տնտեսական, առեւտրական եւ արհեստագիտական յարաբերութիւնները զարգացընելու միջոցները, ինչպէս նաեւ Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացը: Նախագահ Ասատ իր Ֆրանսացի հիւրին ուշադրութեան յանձնեց, որ խաղաղութեան հասնելու համար Իսրայէլ պարտաւոր է գործադրելու միջազգային ընտանիքին պահանջները՝ հեռանալ բռնագրաւած հողերէն եւ ճանչնալ պաղեստինցիներուն ազգային ինքնորոշման իրաւունքը: Ասատ դրուատեց խաղաղութեան հասնելու Ֆրանսայի թափած ճիգերը, ընդգծելով, որ խաղաղութեան գործընթացը կը պահանջէ իսկական կամք եւ յանձնառութիւն:*

*Իր կարգին, Ֆիոն վեր առաւ շրջանային փոխյարաբերութիւններուն մէջ Սուրիոյ ունեցած առանցքային դերակատարութիւնը:*

# ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՆԵՐՈՒՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԱԾ Է

*Այսօր Սուրիայի մէջ համընդհանուր համաներում յայտարարուած է: Ինչպէս կը հաղորդէ սուրիական ՍԱՆԱ գործակալութիւնը, երկրի նախագահ Պաշար Ասատի կողմէն ստորագրուած հրամանագիրը կը տարածուի անոնց վրայ, որոնք յանցագործութիւն կատարած են մինչեւ 2010 թուականի Փետրուարի 23-ը: Համաներման մասին հրամանագիրը, որ չի վերաբերիր ծանր յանցագործութիւններ կատարելու համար դատապարտուածներուն, կը զուգադիպի մահմետական աշխարհի մէջ նշուող Մուհամմէտ մարգարէի ծննդեան օրուան տօնին: Այս նախագահ Ասատի կողմէն յայտարարուած համաներման առաջին հրամանագիրը չէ այն ժամանակէն, երբ ան իշխանութեան եկաւ 2000 թուականի Յունիսին:*

## ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ

# ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱՅ Է ՌԱՅՀԿ-Ի ՆՈՐ ՏԱՐԵԳԻՐՔԸ

Ռազմավարական եւ ազգային հետազօտութիւնների հայկական կենտրոնը (ՌԱՀՀԿ) փետրուարի 19-ին կազմակերպեց յատուկ ընդունելութիւն, որի առիթը ՌԱՀՀԿ-ն՝ 15 տարեկան. Նոր գաղափարների ուժը վերնագրով եռալեզու տարեգրքի լոյսընծայումն է: Գրքի շնորհանդէսին ներկայ էին շուրջ 100 հրաւիրեալներ՝ այդ թւում Ազգային ժողովի պատգամաւորներ, ՀՀ կառավարութեան պաշտօնեաներ, ինչպէս նաեւ մեր երկրում հաւատարմագրուած միջազգային կազմակերպութիւնների ու դիւանագիտական առաքելութիւնների ներկայացուցիչներ՝ Հայաստանում Իտալիայի դեսպան Բրունո Սկապինին, Մեծ Բրիտանիայի դեսպան Ջարլզ Լոնսդեյլը եւ ԵԱՀՀԿ երեւանեան գրասենեակի դեսպան Սերգեյ Կապինոսը:



Ողջունելով հիւրերին՝ ՌԱՀՀԿ տնօրէն Ռիչարդ Կիրակոսեանն ասաց, որ կենտրոնի նոր հրատարակութիւնը բովանդակում է հանրային իրազեկման մակարդակը բարձրացնելուն եւ հայ հասարակութեան ներսում երկխօսութեան խրախուսմանն ուղղուած համապարփակ վերլուծութիւններ եւ նորարար հետազօտութիւններ ամենաարդիական հարցերի շուրջ: Կիրակոսեանի խօսքով՝ տարեգիրքն ամբողջացնում է վերջին 15 տարուայ ընթացքում կենտրոնի կատարած անաչառ եւ արհեստավարժ դիտազննումները, որոնք խարսխուած են Հայաստանում հանրային քաղաքականութեան ձեւաւորման գործընթացի ամրապնդման եւ խորացման վրայ, ինչը կոչուած է նպաստելու մեզանում քննադատական հայեացքի ու մտածելակերպի արմատաւորմանը:

Բանախօսը ցաւով նկատեց, որ գրքի շնորհանդէսին նուիրուած միջոցառումը համընկաւ հայոց բանակի լէյտենանտ Գուրգէն Մարգարեանի ողբերգական մահուան 6-րդ տարելիցին: Նրա յիշեցմամբ՝ վեց տարի առաջ, երբ Մարգարեանը մասնակցում էր Բուդապեշտում ՆԱՏՕ-ի անցկացրած դասընթացներին, դաժանաբար սպանուեց ատրպէյճանցի զինուորի կողմից: Հայ սպայի մահուան օրը յիշատակելով՝ Կիրակոսեանն ընդգծեց, որ այս ոճրագործութիւնը վերահաստատում է մեր ազգային անվտանգութեան դէմ ուղղուած սպառնալիքների իրողութիւնը, որ քանիցս արտայայտուել է Ատրպէյճանի ռազմատենչ յայտարարութիւններով:

Կենտրոնի անունից Կիրակոսեանը նաեւ ողջունեց շնորհանդէսին ներկայ օտարերկրացի դիւանագէտներին եւ միջազգային կառոյցների՝ Եւրախորհրդի ու Եվրամիութեան, ԵԱՀՀԿ երեւանեան գրասենեակի, Կարմիր խաչի, ՄԱԿ-ի եւ ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալութեան ներկայացուցիչներին, ինչպէս նաեւ ՀՀ մի շարք նախարարութիւնների ու գերատեսչութիւնների պաշտօնեաներին եւ Ազգային ժողովի «Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւորներին:

Այնուհետեւ ողջոյնի խօսքով հանդէս եկան ՌԱՀՀԿ տարեգրքում իրենց աշխատանքները զետեղուած հեղինակներից տնտեսագիտութեան դոկտոր Թաթուլ Մանասերեանը եւ ՌԱՀՀԿ աւագ փորձագէտ Մանուէլ Սարգսեանը: Իր ելոյթում Մանասերեանը բարձր գնահատեց կենտրոնի 15 տարուայ գործունէութիւնը՝ նշելով, որ յոբելեանական այս տարեգիրքն ինքնին նորարար եւ անկողմնակալ վերլուծութեան լաւագոյն օրինակ է: Իր հերթին Սարգսեանը յաւելեց, որ ՌԱՀՀԿ-ի նոր հրատարակութիւնը ընթերցողի դատին է ներկայացրել աւելի բազմազան ու համալիր վերլուծութիւններ, որոնք շօշափում են ներքին եւ արտաքին քաղաքականութեան կարեւոր դիտանկիւններին վերաբերող հարցերի լայն շրջանակ:

Եզրափակիչ խօսքում ՌԱՀՀԿ տնօրէնը յիշեցրեց, որ կենտրոնը՝ որպէս Հայաստանում հանրակարգային առաջին նախաձեռնութիւն, 15 տարի առաջ հիմնադրել է ՀՀ արտաքին գործերի առաջին նախարար Րաֆֆի Կ. Յովհաննիսեանը՝ իր տեսլականի կիզակէտում ունենալով նորանկախ Հայաստանում ռազմավարական անկախ հետազօտութիւնների ինստիտուտի կամ Ythink tank'-ի աներկբայելի անհրաժեշտութիւնը:

Մօտաւորապէս 500 էջից բաղկացած «ՌԱՀՀԿ-ն՝ 15 տարեկան. Նոր գաղափարների ուժը» տարեգիրքը երկու տասնեակից աւելի հայերէն, անգլերէն եւ ռուսերէն վերլուծութիւնների եւ յօդուածների ինքնատիպ ժողովածու է, որոնց հեղինակներն են հայ եւ օտարազգի առաջատար փորձագէտներ: Այն նաեւ ներառում է 1991թ.-ից մինչ օրս Հարաւային Կովկասի տարածաշրջանի երկրներում՝ մասնաւորապէս Հայաստանում, Ատրպէյճանում, Վրաստանում եւ Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած նշանակալի իրադարձութիւնների համառօտ ժամանակագրութիւնը, քաղաքական, սոցիալ-տնտեսական, ինչպէս եւ անվտանգութեանը վերաբերող հարցեր, ընթերցողի դատին է յանձնում յաւելեալ համապատասխան քարտէսներ, փաստաթղթեր եւ նիւթեր: Դուք կարող էք «ՌԱՀՀԿ-ն՝ 15 տարեկան. Նոր գաղափարների ուժը» ժողովածուն ձեռք բերել՝ կապուելով կենտրոնի հետ, իսկ դրա էլեկտրոնային տարբերակը ներբեռնել ՌԱՀՀԿ-ի՝ www.acnis.am/main կայքէջից:

# ՈՂԲԱՄ ՔԵԶ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ ՈՐ...

ՍՈՒՐԷՆ ԽՈՒԴԱՆԵԱՆ

Զարուհի Բոստանջեանը սակաւաթիւ ընդդիմադիր պատգամաւորների կազմում, խիզախ Հայ կնոջ կերպարով ճանաչուեց Հայ հասարակայնութեանը:

Մանաւանդ երկրում մարդու իրաւունքների ոտնահարման, քաղբանտարկեալների ազատութեան եւ ժողովրդավարութեան համար պայքարի խնդրում ցուցաբերած հետեւողական եւ սկզբունքային մօտեցմամբ արժանացաւ Հայրենի ազատասէր զանգուածի ուշադրութեանը: Չնայած այն բանին որ յաճախ հանդիպում էր իշխանական ուժերի ճնշմանը եւ որոշ իշխանիկների անպարկեշտ վերաբերմունքին:

Թող սխալ չհասկացուի, սա Հայոց «Ժան Դ Արկի» կերպարապատում չէ , չնայած Հայ ժողովուրդը աւելի խիզախ եւ Հայրենասէր հերոսուհիների պակաս չի ունեցել;

2008 թ.-ի Մարտի 1-ին Հայրենի ազատատենչ ժողովրդի նկատմամբ յանցաւոր բռնարարքի գնահատականի ակնկալութիւնը երկրի ժողովրդավարացման գործընթացի կարեւորագոյն հանգրուաններից է, որը ներկայիս իշխանութիւնը ամեն գնով փորձում է կոծկել: Կարծես ոչ մի բան չի եղել; 10 հոգի սպանուածը ինչ է որ.

Չնայած նիւթի կարեւորութեանը , եւ այժմէականութեանը, կ'ուզենայի կենտրոնանալ մի այլ փաստի վրայ որի յստակ անունը չեմ կարողանում գտնել: Բայց մեծ պատմահայրի յայտնի խօսքի մոտիւներով կարելի է ասել «Ողբամ քեզ Հայ Ժողովուրդ որ այսպիսին է քո պառլամենտը,»

Պառլամենտ է «Ազգի» ընտրեալների «ժողովատեղի, տարաբնոյթ, տարակարծիք, հակադիր մտքերի արտայայտման վայր, որտեղ ինչպէս կ'ասէր Մարքսը հակադրութիւնների հակասութիւնից եւ միասնութիւնից առաջանում է զարգացումը, այսինքն այն, ինչին ձգտում ենք, ճշմարիտ, արդար, ազգօգուտ որոշումների կայացումը եւ օրէնքների սահմանումը ;

Զարուհին մի բան կ'ասի, Գալուստը մի այլ բան, իսկ Արմէնն էլ լրիւ ուրիշ բան,

Կարեւորը սա է, որ բան ասեն, բանն էլ լսեն, ոչ հայհոյեն:

Պառլամենտական առօրեան դիտելիս, նկատում ենք, որ Զարուհին չնայած իր մայրացող ֆիզիքական վիճակին, իր պատասխանատու աշխատանքն է կատարում, ելոյթ ունենալով Ազգային ժողովի ամպիոնից:Փորձում է բացատրել եւ բացայայտել Մարտի 1-ը կոծկելու իշխանութիւնների ձգտումը: Զայնասփիւռներից լսւում է փողոցային վերջին աստիճանի հայհոյանքներ, հաւանաբար այն պատգամաւորների բերանից, որոնք հաստատ իրենց հոգեկերտուածքի եւ դաստիարակութեան համաձայն շփոթում են իրենց «կռուգը» կամ փողոցը, ազգային ժողովի դահլիճի հետ:

Տարօրինակ երկիր ունենք: Բոլոր երկրներում յեղափոխական անցումներից յետոյ, բիրտ ուժի փողոցային գործօնները եւ պետական կերակրատաշտին ձգտող «մկանոտ» դրածոները, դառնում են իշխանութիւնների թիկունքն ու պաշպանը՝ վարչական բոլոր կառոյցներում: Սակայն հետզհետէ գալիս է այդ կառոյցների մանաւանդ օրինաստեղծ կառոյցի, այսինքն պառլամենտի որակաւորման, պրոֆեսիոնալ եւ կիրթ ուժերով համալրման շրջանը:

Սակայն տեսէք Հայոց պառլամենտի պառլամենտական կազմի որակական անկումը 1991 թուից սկսած մինչեւ այսօր:

Blue Cross of California Authorized Agent

Blue Shield of California Authorized Agent

A.B.A. INSURANCE SERVICES

SERVING SINCE 1975

BEDROS S. MARONIAN



(818) 500-9585

BMaronian@AOL.com

FAX 500-9308 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205

ԵՐԲԵՔ ՈՒՇ ՉԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

**ԳԱՂՈՒԹԱՅԻՆ**

# ՀԱՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՇՐՋՈՒՆ ԴԱՍԱԽՕՍԻՆ ՇԻՋՈՒՄԸ

## (ՓՐՈՖ. ԳԷՈՐԳ ԽՐԼՈԲԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ)

*ՊԷՊՕ ՍԻՄՈՆԵԱՆ*



*Այնուհետեւ որոտընդոստ ծափերու ներքեւ բեմ բարձրացաւ «Մաեսթրօ»* (Maestro) *ֆիլմի բեմադրիչ տաղանդաւոր արուեստագէտ Վիգէն Ջալտրանեան: Ան իր անհուն ուրախութիւնն ու գոհունակութիւնը յայտնեց որ «Մաեսթրօ»ի երեւանեան «բրէմիէրա»էն ետք ասիկա երկրորդն է որ տեղի կ'ունենայ խաղաղականի այս ափերուն վրայ: Իր խօսքի ընթացքին յարեց՝ «Որեւէ բեմադրիչ կը ցանկայ տեսնել իր գործի անդրանիկ ցուցադրութիւնը: Իսկ ինչ կը վերաբերի այս նոր ֆիլմին՝ չեմ ուզեր մասնաւոր բացատրութիւններ տալ: Այն ինչ որ կ'ուզէի ըսել՝ արդէն դրուած է պաստառին վրայ...: Շնորհակալութիւն* V. Vasel*-ին եւ Հայֆիլմ կինոստուդիային: Երախտապարտ եմ հանդիսատեսին եւ սիրով այս ցուցադրութիւնը կը յանձնեմ ձեր դատին...»:*

*Կազմակերպիչ միութեան անունով Թերեզա Հայրապետեան շնորհակալութիւն յայտնելէ ետք հանդիսականներուն իր երախտագիտութիւնը յայտնեց նաեւ Վիգէն Ջալտրանեանին եւ առ այդ յուշատախտակով մը պատուեց զինք:*

*Դիտելով «Մաեսթրօ»ն որ երաժիշտի մը կեանքն է, իր ընկերային, ընտանեկան եւ ասպարէզի հետ առնչուող շատ մը հակասական եւ իրարամերժ զարգացումներով, կու գաս այն եզրակացութեան որ եղածը՝ վերջին տարիներու մեր ցաւն է: Այնտեղ կայ սէր, նախանձ, անհանդուրժողականութիւն, նուիրում, արուեստական խոչընդոտներ, քաղաքական պայքար, անիրաւութիւններ եւ այլն: Այս բոլորն իրարու ագուցուած են եւ այնպէս մը շաղկապուած, որ հանդիսատեսը անձանձրոյթ եւ լարուած ուշադրութեամբ կը հետեւի նիւթի զարգացումներուն: Մէկ խօսքով եւրոպական բարձրորակ ֆիլմերու մակարդակին հասած արտադրութիւն մըն է եւ հպարտաւիթ երեւոյթ մը դիտողին համար: Այստեղ առկայ են նաեւ նորարարութիւններն ու ժամանակին հետ քայլ պահուած տեսա-լսողական եւ բեմադրական թէքնիքը: Արդարեւ գնահատելի յառաջդիմութիւն մըն է հայ ֆիլմարուեստի պատմութեան մէջ:*

*Անշուշտ այս բոլորին մէջ մեծ դեր ունի նոյնինքն բեմադրիչ 54 ամեայ Վիգէն Ջալտրեանը, որ ցարդ բեմադրած է 17 երկար ու կարճամեթրաժ ժապաւէններ եւ արժանացած 30 միջազգային մրցոյթներու եւ վկայականներու: Անոնցմէ են. Հիւսթընի (Թէքսաս) 1994ի ֆիլմի փառատօնի ոսկեմետալը, Հայաստանի Շարժապատկերի Ընկերակցութեան «Անահիտ» մրցանակն ու Հայաստանի Հանրապետութեան «Պատուաւոր Արթիսթ» կոչումը:*

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ

ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ

(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA

ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680



## ՊԱՏՄՈՒԱԾՔ

### ԴԻՄԱՍՏՈՒԵՐ - ՅԻՇԵԼԻ ԴԷՄՔԵՐ
# ԿԱՐԱԲԱԼԱ... ԻՐԱԿԱՆ ԼԵԳԵՆԴԸ...

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Ո՞վ չէր ճանաչում Կարա Բալային: Նրան գիտէին ոչ միայն երեւանցիները, այլ ամբողջ Հայաստանը:

Այս բարի, ազնիւ, հոգով ու սրտով հարուստ, հնացած ու մաշուած հագուստներ հագած մարդուն գիտէին բոլորը...:

Տարիներ, տարիներ, ձմեռ թէ ամառ, կանգնած Երեւանի Աբովեան փողոցում, ծաղիկ էր հրամցնում անցորդներին, վճարումով, շատ յաճախ՝ անվճար...:

Ահա այդպէս է եղել Կարա Բալան, որի արձանը որպէս բարութեան, սիրոյ խորհրդանիշ, այսօր կանգնած է Երեւանում...

Երանի՜ Կարա Բալաներ շատ ունենայինք...:

*ԱՐՄԻՆԷ ՄԵԼԻՔ-ԻՍՐԱՅԷԼԵԱՆ*



*Հայաստան այցելած իւրաքանչիւր հայ անպայման քայլել է Երեւանի կենտրոնական ու պատմական դարձած՝ նախկինում յայտնի Աստաֆեան, ներկայիս՝ Աբովեան փողոցով: Ամէն անցորդ գիտի այս փողոցի պատմութեան մի մասնիկը դարձող յայտնի ծերունի ծաղկավաճառի՝ Կարաբալայի արձանը: Եթէ անգամ նրա ով լինելուն անծանօթ են, ապա կորացած մէջքով, բարի դէմքով ծաղկազամբիւղից անյայտ անցորդին պարզուած ծաղիկը ձեռքին ծերուկի բրոնզաձոյլ արձանը կանգնեցնում է ցանկացած զբօսաշրջիկի՝ լինի օտարազգի թէ հայ: Երեւանի խորհրդանիշ ծերունի ծաղկավաճառի հետ լուսանկարուելու սովորոյթը շատերի յիշողութիւններում լուսաւոր մի հետք է Երեւանից: Տասնամեակներ են անցել Կարաբալայի արձանի տեղադրումից, մոռացուել են անսովոր ծերունու քանդակի մասին ասեկոսները, անսկզբունք քննադատների դժգոհ խայթոցները, որոնք ուղղուած էին աւելի շատ քանդակի հեղինակին՝ հայ քանդակագործութեան մէջ իր մոնումենտալ ներկայութիւնը վաղուց հաստատած քանդակագործի՝ Լեւոն Թոքմաջեանի օր-օրի աճող հեղինակութեան դէմ, որով երբեւիցէ չի մեծամտացել վաստակաշատ արուեստագէտը:*

*Լեւոն Թոքմաջեանի իւրաքանչիւր ստեղծագործութիւն ունի իր հետաքրքիր պատմութիւնը: Կարբալան նրանց առաջին շարքում է: Կարաբալան այսօր ընկալւում է որպէս մոդեռն եւ դասական քանդակագործութեան մի իւրայատուկ նմուշ, որը ժամանակի հետ աւելի սիրելի ու հարազատ է դառնում մարդկանց, բայց շատերին է անյայտ, այս հեքիաթային պերսոնաժ յիշեցնող բարի ծերուկի իրական պատմութիւնը... Մինչդեռ, քանդակագործը այս ստեղծագործութեամբ յաւերժացրել է իրեն դեռ մանկութեան տարիներից ծանօթ իրական մարդու:*

*- Կարաբալան հօրս ընկերն էր: Մեր ընտանիքը ապրում էր Երեւանի նախկինում Աւերդլովսկ՝ ներկայիս Փաւստոս Բիւզանդ փողոցի վրայ: Երբ հայրս, որ ներկարար էր, ուշ էր տուն գալիս՝ մայրս ինձ ուղարկում էր Աբովեան փողոցի վրայ գտնուող գինետներից նրան կանչելու: Կարաբալայի հետ միասին նստած խմում էին..., - պատմում է Լեւոն Թոքմաջեանը, մեկնելով Կարաբալայի իրական պատմութեան դրուագները...*

*Կարաբալայի իսկական անունը եղել է Կարապետ, նա արեւմտեան Հայաստանից էր եւ ըստ ժամանակակիցների վախուրած ու կցկտուր վկայութիւնների՝ եղել էր ուսեալ եւ հարուստ մարդ: Նորքի բաղերում մեծ վարդաստան ունէր: Սովետական տարիների կասկածի ու հալածանքի ստուերը ծածկել էր նաեւ նրան, անյայտ հանգամանքներում նախկին ազնուականից վերածելով աղքատ, խեղճ ու կրակ մարդու, ում հանդէպ սովորաբար լաւագոյն դէպքում խղճահարութիւն էին ապրում «սովետական երկրի ազնիւ քաղաքացիները»... Երեւանի փողոցներում շրջում էր նա՝ հնամաշ հագուստներով, գունատուած, խունացած գլխարկն աչքերին իջած, ձեռքին ծաղկի զամբիւղ... Անցորդ սիրահար զոյգերին անհատոյց ծաղիկներ էր նուիրում, «երջանիկ լինէք» ասելով...*

*- Նա միայն վարդեր էր նուիրում եւ խմում էր միայն գինի, դրանից էր երեւի, որ շուրթերը գինու պէս կարմիր էին..., նկատում է պարոն Թոքմաջեանը, ում ծանօթ են Կարաբալայի թաքուն սիրոյ պատմութեան ուշագրաւ մանրամասները...*

*Կարաբալան սիրահարուած էր հայ անուանի եւ սիրուած դերասանուհիներից Արուս Ոսկանեանին, ով յայտնի էր ոչ միայն իր տաղանդով, այլեւ գեղեցկութեամբ: Իր գաղտնի սէրը Կարաբալան երբեք չյայտնեց դերասանուհուն, որին գրեթէ ամէն օր աննկատ հետեւում էր... Եւ մի հերթական օր, երբ սովորականի պէս քայլում էր սիրելի կնոջ ետեւից, նկատում է մի թուրքի, որ առանց քաշուելու հետապնդում էր դերասանուհուն արժանանալով վերջինիս հերթական կշտամբանքին... Կարաբալան անկիրթ թուրքին զգուշացնում է այլեւս չանհանգստացնել դերասանուհուն, հակառակ դէպքում սպառնալով սպանել նրան: Օրեր անց, իր պաշտելի դերասանուհուն հետեւելիք դժբախտ սիրահարը հանդիպում է նոյն տեսարանին, երբ յամառ թուրքի հետապնդումներից զայրացած դերասանուհին փորձում է հնարաւորինս արագ ազատ-*

*Շար.ը էջ 19*

### ՓՈԽԱՆ ԳՐԱԽՕՍԱԿԱՆԻ
# ՎԱՒԵՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

*Հ. ԹՈՒՄԱՆԵԱՆ*

*«Կեանքի Յուշեր»: Այսպէս է խորագրել Թեհրանում լոյս տեսած իր գիրքը Մեծ Եղեռնի ականատեսներից մէկը Տ. Յարութիւն Տէր Մեսրոպեանը: Ճշմարտապատում այս գրքում ընթերցողը գտնում է յուզիչ պատմութիւնը մի հայի, որ թրքական եաթաղանից մազապուրծ հազարաւոր բախտակիցների հետ թողնելով հարազատ հողը, հայրենական յարկը, ստիպուած էր ապաստան փնտռել օտար երկինքների տակ:*

*Տէր Մեսրոպեանի գիրքը սոսկ յուշագրութիւն չէ: Անդարձ կորստից փրկելու մտահոգութեամբ հեղինակը թղթին է յանձնել ոչ միայն իր կեանքի յուշերը, այլեւ այն ամէնը ինչ գիտէ, ինչ յաջողուել է հաւաքել ու պահպանել իր բնօրրանի պատմութեան, աշխարհագրութեան, բնակիչների զբաղմունքի, կեանքի ու կենցաղի, սովորոյթների, բառ ու բանի վերաբերեալ:*

*Հեղինակի ծննդավայրը Վասպուրական նահանգի Թիմար գաւառն է, տիպիկ Հայկական բնապատկերով մի անկիւն, որի բնակիչներն ապրում էին միայն խաղաղ աշխատանքի երազանքով, որ սակայն, այնպէս բրտօրէն փշրուեց թուրք ցեղասպանների ձեռքով, դատարկուեցին գիւղերը, ամայացան դաշտերը, երբեմնի շէն օճախները վերածուեցն մոխրակոյտերի: Հեղինակը չի մոռացել տալ Թիմար գաւառի քարտէզը, գիւղերի ցուցակը, բնակչութեան թիւը:*

*Իր մօր եւ այլ ականատեսների պատմածների հիման վրայ, Տէր Մեսրոպեանը վերարտադրում է 1895-96 թուականների հայկական կոտորածների պատկերը Վասպուրականում: Հեղինակը ցոյց է տուել, որ վասպուրականցի խաղաղ շինականները, երբ հարկը պահանջում էր, գիտէին քաջաբար կռուել, զէնքով պաշտպանել իրենց օճախն ու պատիւը: Թիմար գաւառի եւ միւս շրջանների շատ երիտասարդներ թոհուբոհի օրերին զինուած դիմագրաւում են թուրք ջարդարարներին: Սակայն որքան էլ նրանք անձնուիրաբար մարտնչեցին, այնուամենայնիւ անկարող եղան կանխել թշնամու վայրագութիւնները թրքական մեծաթիւ ուժերի դէմ, մղուած անհաւասար կռւում քաջաբար ընկան շատ շատերը: Սակայն մեծ արհաւիրքը դեռ առջեւում էր: Մեծ Եղեռնի ականատեսը լինելով՝ հեղինակը սարսուռով է վերապրում իր ժողովրդին պատուհասած դէպքերի ողջ ահաւորութիւնը, ճշմարտացի վերապրում է հայ գողգոթան: Վասպուրականցիները նախազգալով, թէ ինչպիսի ոճիր է նիւթւում թրքական իշխանութիւնների կողմից վճռում են նորից զէնք առնել: Հայրենասիրական խանդավառութիւնը համակում է ամէնքին:*

*Ինքնապաշտպանութեան նախապատրաստութեանը մասնակցում են ամէնքը՝ ծեր ու պատանի, կանայք ու աղջիկներ: Հայ երիտասարդները, արհամարհելով մահուան վտանգը, զէնք են հայթայթում եւ գաղտնաբար տեղափոխում այն վայրերը, որտեղ գումարուելու էին վասպուրականցիների ջոկատները: Հեղինակը հպարտութեան զգացումով է պատկերում Լիմ անապատում, Արճակ, Խառակունիս, Ալուր եւ այլ գիւղերի մօտ տեղի ունեցած ինքնապաշտպանութեան մարտերը, որտեղ վասպուրականցիները խիզախութեան շատ օրինակներ են ցոյց տալիս: Այդ մարտերի շնորհիւ է միայն, որ յաջողւում է խոշտանգումից եւ անարգումից փրկել շատ հայ ընտանիքների, կանանց ու երեխաների: Յուշագրութեան հեղինակն այնուհետեւ պատմում է եղեռնից փրկուած իր հայրենակիցների, սեփական օճախից վտարուած տասնեակ հազարաւոր հայ տարագիրների յետագայ կեանքի դէպքերը: Նրանց մի մասը ապահով հանգրուան գտաւ Սովետական Հայաստանում, դառնալով իր պետականութիւնը վերագտած հայրենի երկրի վերաշինութեան մեծ գործի մասնակիցը: Միւսներին սպասում էր պանդուխտ հայի անհաստատ կեանքը օտար ափերում:*

*Իբրեւ գրքի յաւելուած հեղինակը ներկայացրել է Վասպուրական նահանգի եւ Թիմար գաւառի ժողովրդական հեքիաթների, երգերի նմուշները:*

*Տ. Յարութիւն Տէր Մեսրոպեանի «Կեանքի յուշեր» գիրքը հետաքրքրութիւն է ներկայացնում ոչ միայն ընթերցողների լայն շրջանի, այլեւ պատմաբանի, բանասէրի, ազգագրագէտի համար:*


# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ**

- - - - - - - - - - - - - - - - - - - - - - - - -

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**

**Enclosed a check for (one year)**

*** $50,00 for USA**

*** $60,00 (second class), $ 75,00 (Air Mail) for Canada.**

*** $85,00 (second class), $ 125,00 (Air Mail) Overseas.**

**Name: ------------------------------------------**

**Address: ---------------------------------------**

**City: --------- State:--------- Zip Code:------**

**Country: -------------**

**Tel :----------------------- Fax : -------------------------**


EVERDAY LOW PRICES
GREY GOOSE Vodka 21.99
STOLICHNAYA ELIT Vodka 40.99
STOLICHNAYA Vodka 1.75L 18.99
MANE VSOP 5 Yr Armenian Brandy 19.99
HENNESSY VS Cognac 20.99
COURVOISIER VS Cognac 16.99
REMY MARTIN VSOP Cognac 29.99
REMY MARTIN XO Cognac 92.99
BLAVOD Vodka 18.99
COURVOISIER VSOP Cognac 24.99
HENNESSY Historic Edition 23.99
JOHNNIE WALKER Black Label 18.99
JOHNNIE WALKER Blue Label 114.99
JOHNNIE WALKER Gold Label 44.99
CIROC Vodka 16.99
PATRON Silver Tequila 29.99
ULTIMAT Vodka 29.99
HENNESSY XO Cognac 109.99
JACQUES CARDIN VSOP Cognac 14.99
CROWN ROYAL Canadian Whisky 12.99
GRANT'S Scotch Whisky 1.0L 10.99
TRES GENERACIONES Plata Tequila 26.99
TRES GENERACIONES Añejo Tequila 28.99
1800 Reposado Tequila 15.99
THREE OLIVES Vodka 1.75L 17.99
CORZO Silver Tequila 29.99
DEWAR'S 12 Years Whisky 16.99
DON JULIO 1942 Tequila 77.99
SKYY Vodka 1.75L 17.99
PUTINKA Classic Vodka 8.99
CAZADORES Reposado Tequila 19.99
COURVOISIER XO Cognac 79.99
HENNESSY VSOP Cognac 32.99
CRISTALL Russian Vodka 12.99
DOS LUNAS Silver Tequila 19.99
SKYY Vodka 9.49
GANTOUS & ABOU RAAD Arak 11.49
NOY 7 YEARS Armenian Brandy 21.99
NOY 10 YEARS Armenian Brandy 31.99
MANE XO 10 Yr Armenian Brandy 29.99
JACK DANIEL'S Old No. 7 Whiskey 14.99
UNBEATABLE PRICES! HUGE SELECTION!
1785 E. Washington Blvd.
Pasadena, CA 91104
(626) 794-7026
Open Monday—Saturday
9 am - 8 pm
MISSION Wine & Spirits
825 W. Glenoaks Blvd.
Glendale, CA 91202
(818) 242-0683
Open Monday—Saturday
9 am - 8 pm
*This ad expires on 03/06/10 • 12 or more bottles Mix & Match • We reserve the right to limit quantities • Sales tax excluded • Prices subject to change without notice • No CCs • All items are 750ml in size unless specified.

# ՍՐՏԻ ՏԱԳՆԱՊԸ ՆԱԽԱՏԵՍԵԼՈՒ ԵՒ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԻՋՈՑ ՄԸ

*ՏՕՔԹ. Մ. ՃԵՐԹՐԸԼ*




Ողբերգական բան է տեսնել ուժերու ծաղկումին մէջ ընտանեկան ու ընկերային պատասխանատուութիւննեւուր տէր մարդ մը, որ յանկարծ զոհ կ'երթայ սրտի տագնապին: Աւելի եւս ողբերգական կ'ըլլայ, եթէ գիտնանք, արդի գիտութեան լոյսին տակ, որ այս արկածէն կարելի էր խուսափիլ, կամ առնուազն հեռացնել զայն, կանխարգելիչ անհրաժեշտ միջոցներով: Իրօք, այսր կարելի է նախատեսել թէ ո՞ր չափահասը կանխատրամադրուած է սրտի տագնապներու, ի՛նչ ալ ըլլայ իր տարիքը, շատ առաջ անդարմանելի վնասուածներու վերջին փուլէն: Սրտի շնչերակներու հիւանդութիւնը, քսան կամ աւելի տարիներու ներքին խմորման շրջան մը ունենալով հանդերձ, կրնայ յանկարծակի մահ պատճառել առանց ազդարար նշանի: Կարելի է նախատեսել մօտաւոր կերպով պատահելիք տագնապին ժամանակը, եթէ ենթական պէտք եղած ատեն չէ խնամուած: Բայց ինչ որ շատ աւելի կարեւոր է, կանխարգելիչ դարմանումն է, անշուշտ որ պայմանաժամը բազմաթիւ տարիներով պիտի յետաձգէ, կամ նոյնիսկ բոլորովին ջնջէ զայն:

### ԻՆՉՊԷ՞Ս ՆԱԽԱՏԵՍԵԼ ՍՐՏԻ ՏԱԳՆԱՊ ՄԸ

Սրտի հիւանդ շնչերակներ ունեցող անձ մը լեցուն կազմ ունի, քառակուսի կզակ. ընդհանրապէս միջինէն քիչ մը կարճ կ'ըլլայ, ոսկրային զօրաւոր կազմով եւ խոշոր յօդաւորումներով: Կզակը սուր անկիւն մը կը կազմէ վիզին հետ, կուրծքը զօրաւոր եւ ձեռքերը լայն: Կը ձգէ գիրութեան տպաւորութիւն, կրնայ տէր ըլլալ որեւէ ասպարէզի: «Վիճակագրութիւնները ցոյց կու տան որ կիները ենթակայ չեն այս հիւանդութեան, դաշտանի դադարմէն առաջ: Այդ շրջանէն ետք, անոնց մօտ ալ անոյնքնա յաճախադէպ կը դառնայ սրտի հիւանդութիւնը, որքայ այրերուն):

Ան հաւանաբար ըսէ ձեզի, որ իր հայրը կամ մայրը, կամ նոյնիսկ եղբայրը, սրտի գատնապներ անցուցած են. աւելի մանրամասն հարցաքննուելու պարագային, թերեւս յիշէ որ լաւ չի մարսեր որոշ ժամանակէ ի վեր, թէեւ միշտ աե այդպէս չէ պարագան. կրնայ ըլլալ որ յօդատապ ունենայ, շաքարախտ, կամ արեան գերճնշում:

Այսքանը արդեօք բա՞ւ է մեզի առանց կասկածի հաստատելու, որ ենթական անմիջական սպառնալիքի տակ է. անշուշտ ոչ, բայց ճամբուն վրայ ենք արդէն. հիմա պիտի անցնինք տարրալուծումներու շարքի մը, «առ հարիւր»ով չափելու համար, իր արեան սերումին մէջ ճարպերու, քոլեսթերոլի եւ բնամիզային թթուի (աստի իւրիք) քանակը:

Վերոյիշեալ չափումներով կարելի կը դառնայ նախատեսել մեծ ճշգրտութեամբ թէ մեր ենթական սրտի տագնապ մը պատրաստելու վրայ է, կամ ոչ: Կը գործածեն «սրտային շնչերակներու չափագրեալ տախտակ»ի մեթոտը, գլուխ բերուած պրպտողներու խումբի մը կողմէ, որ 1946էն ի վեր կ'աշխատի սրտային շնչերակներու վրայ, Հարվըրտի Համալսարանին եւ Մասաչուսեցի Կեդրոնական Հիւանդանոցին մէջ, սրտի մեծ մասնագէտ տօքթ. Փոլ Ուայթի ղեկավարութեան տակ:

Այս մեթոտին արդիւնաւէտութիւնը փաստուած է ուսումնասիրութեամբ մը, կատարուած՝ 600 անձերու վրայ: Նիւ Եորքեան բազմաթիւ մեծ ընկերութիւններու պաշտօնեաներու բոլորն ալ ընդունած են բժշկական տարեկան քննութիւններու ենթարկուիլ: Այս խումբին մէջ, 38 ենթականեր չափագրեալ տախտակին վրայ կը դասուէին ամենէն աւելի վտանգաւածներու շարքին. արդարեւ, յաջորդող երեք տարիներու ընթացքին, անոնց մեծամասնութիւնը տագնապ ունեցաւ: Այսօր բոլոր անձերը, որոնց սրտերակային տախտակը զանոնք վտանգուած ցոյց կու տայ, անմիջապէս առարկայ կը դառնան կանխարգելիչ դարմանումի, իրենց դարմանումները այս հիման վրայ հաստատող բժիշկներու թիւն ալ կ'աւելնայ օրէ օր:

Տարրալուծարանի մը մէջ իրենց տարեկան առողջական քննութիւնը անցնող երեք մարդոց պարագան յստակօրէն ցոյց կու տայ այս դրութեան արժէքը: Երեքն ալ, յիսունի սահմանին վրայ, ցոյց կու տային սրտերակային իրերանման տախտակներ եւ իրենց թելադրուեցան կանխարգելիչ դարմանումի մը հետեւիլ. երեքէն երկուքը թելադրանքին կարեւորութիւն չտուին. մէկը յանկարծ մեռաւ, վեց ամիս ետք, սրտի սուր տագնապով մը: Երկրորդը ունեցաւ տագնպա մը, որմէ ետք վերապրեցաւ, բայց որիրեն տուաւ սրտային սպի մը: Երրորդը հետեւաեցաւ տրուած խորհուրդին: Շուտով, իր սրտերակային տախտակը վերածուեցաւ «փոքր չափով զանգուած»ի մը, եւ հիմա ենթական կը շարունակէ կանխարգելիչ դարմանումը, տէր մնալով նախկին ֆիզիքական բարօրութեան:

### Ի՞ՆՉ Է ՍՐՏԻ ՏԱԳՆԱՊԸ

Բաւական երկար տարիներ, կը կարծուէր որ այս տեսակի արկածները ծերացումի հետեւանք էին եւ որ զօրաւոր տագնապի պարագային, մահը անխուսափելի էր: Բայց որոշ պրպտող միտքեր, որոնց կարգին տօքթ. Ուայթ հարց տուին թէ արդեօք սխալ չէի՞ն այդ ըմբռնումները: Տարօրինակ բան, Քորէայի պատերազմի ընթացքին սպաննուած ամերիկացի բազմաթիւ զինուորներու դիազննումը – քսաներկուքը ըլլալով միջին տարիք – ցոյց տուաւ հիւանդութեան հետքերը սկզբնափուլի մէջ: Ասկէ այն հետեւութիւնը ձեռք բերուեցաւ որ հիւանդութեան ընթացքը աստիճանական է եւ ախտաբանական, ինչպէս կեղծմաշկինը, կամ որեւէ ուրիշ վարակիչ հիւանդութեան, հակառակ որ կը զարգանայ շատ դանդաղօրէն:

Սրտի տագնապները ծնունդ կ'առնեն սրտային շնչերակներէն, որոնք կեդրոնական այդ մղիչին արիւն կը հայթայթեն: Պարագաներու 95 առ հարիւրին համար, հիւանդութեան պատճառը արթերիոքլերոզ կոչուած երեւոյթն է. շնչերակներու ներքին մակերեսը կը ներթափանցուի դեղնորակ պարպերով, քոլեսթերոլով, ի միջի այլոց: Վերջին շրջանին, շնչերակին ներքին մակերեսը պատուած կ'ըլլայ ճարպի գնդիկներու եւ բիւրեղային մասնիկներու խաւով մը, որ խտանալով ու կարծրանալով, կը թանձրանան այն աստիճան որ կը խցեն արիւնին անցքը սրտային շնչերակներու մէջէն:

Անցքի փոքրացման այս կէտերը անհարթ մակերես ունին եւ ամէն յարմարութիւն կը ներկայացնեն լերդի կտորի մը կազմութեան հմաար: Եւ երբ այս վերջինը կազմուի, անմիջապէս ննդազրկում եւ մահ կ'առաջացնէ սրտի այն մասին մէջ, որ իր սնունդը կը ստանար այս շնչերակէն ու անոր մազերակներու ցանցէն, անշուշտ եթէ լերդի կտորը ամբողջ անցքը խցած է: Եւ ասիկա սովորական լեզուով, կը կոչուի սրտի տագնապ:

Երկար տարիներ պէտք են որպէսզի խնդիրը այս կէտին հասնի. կուրծքի ցաւերուն պէս բացայայտ նշաններ կրնան երեւան չգալ յիսունէն կամ վաթսունէն առաջ, մինչ ճարպային նիւթերու կուտակումը կրնայ սկսիլ քսան կամ երեսուն տարեկանին: Ժամանակին եթէ միջամտութիւն ըլլայ, կարելի է զարգացման ընթացքը կեցնել կամ նոյնիսկ հակառակ ուղղութիւն տալ անոր. բայց անգամ մը որ վերջին փուլին հասած է եւ շնչերակային հիւսուածին մէկ մասը կարծրացած է ալ ոչինչ կարելի է փոխել:

### ՍՐՏԵՐԱԿԱՅԻՆ ՏԱԽՏԱԿԻՆ ԳԾՈՒԱԾՔԸ

Այս գծուածքի պատրաստութեան համար կը գործածուի ամբողջ շարք մը տախտակներու, որոնք կը մէջբերեն խնդրոյ առարկայ բոլոր ազդակներուն բարդ փոխյարաբերութիւնները: Աշխատանքը անկարելի պիտի ըլլար առանց ելեկտրոնական հաշուիչներու, որովհետեւ ութ փոփոխելի ազդակներով, կարելի դասաւորումներու թիւը կը բարձրանայ 8ի: Ուրեմն, միայն մէկ անձի վերաբերող ցուցմունքները կրնան կազմել շուրջ 16 միլիոնի կարելիութիւններ. բայց շնորհիւ տախտակներուն եւ քանի մը բարդ փորձերու, ենթական կրնայ բժիշկին օգնութեամբ, դիւրաւ կազմել սրտերակային իր գծուածքը:

Այս հաշիւներուն մէջ նկատի առնուած ազգակները ենթարկուած են մանրամասն գիտական ուսումնասիրութիւններու, սրտերակային հիւնադութեան ենթակայ բազմաթիւ անձերու վրայ. օրինակ՝

### ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆԱԽԸՆԹԱՑՆԵՐ

Մօտէն քննելով սրտերակային հիւանդներու եւ առողջ անձերու ընտանեկան պարագաները, յայտնուած է որ աւելի մեծ թիւով սրտի տագնապներ երեւան եկած են առաջիններու ծնողներուն մօտ, քան երկրորդներուն, իսկ ութ անգամ աւելի հիւանդներու եղբայր քոյրերուն մօտ, քան առողջներու:

Սրտերակային կեցուածքի պատրաստութեան մէջ կը մտնեն դեռ ուրիշ փոփոխականներ, ինչպէս շնչերակային ճնշումը եւ շաքարախտը, որոնց երկուքն ալ կ'աւելցնեն վտանգը. հասակն ալ պէտք է նկատի ունենալ, որովհետեւ փոքրակազմ ենթարկաները աւելի վտանգուած են, քան յաղթակազմները: Ի վերջոյ, պէտք է նաեւ նկատի ունենալ արեան մէջ սակը փոսփորային ճարպերու, որոնք հաւանաբար կ'արգիլեն քոլեսթերոլի հաստատուն խաւերու կազմութիւնը:

Բոլոր այս ազդակները միասնաբար առած կը ճշդեն չափը իւրաքանչիւր անձի ունեցած կանխատրամադրութեան, «զերօ»էն մինչեւ «շատ մեծ» գացող աստիճանաւորումի մը համաձայն, որ այսպէս կը կազմէ սրտերակային գծուածքը. բայց ուշադրութիւն. մէկ, երկու կամ երեք ազդակ բաւարար չեն. պէտք է զանոնք բոլորն ալ գնահատել յարաբերաբար մէկը միւսին, եթէ կ'ուզենք որ ընդհանուր քննութիւնը ի վերջոյ արժէք մը ունենայ:

### ՔՈԼԵՍԹԵՐՈԼԸ

Մոմային, հաստատուն այս նիւթը մեր գործածած սննդանիւթերու մէկ մասին մէջ կը գտնուի անհրաժեշտէ առողջութեան: Քոլեսթերոլը կը ներկացէ գրեթէ հինգ առ հարիւրը ուղեղի եւ ջղային հիւսուածի հաստատուն նիւթին, եւ կը կարծուի որ դեր մը կը կատարէ ջղային հոսանքին մէջ. կը մասնակցի նաեւ սեռային հորմոններու պատրաստութեան. բժիշկները կը սկսին մտահոգուիլ արեան մէջ անոր ներկայութեամբ, երբ կը հասնի անսովոր չափով բարձր սակի մը, որովհետեւ քոլեսթերոլը մէկն է սրտի շնչերակները խցող ճարպային նիւթերէն, ուրեն ան կարեւոր տարրերէն մէկն է սրտերակային տախտակին, թէեւ երբեք միակ պատասխանատուն:

### ԲՆԱՄԻԶԱՅԻՆ ԹԹՈՒՆ (ACID URIK)

Երբ օրկանիզմը կ'այրէ իր վառելանիւթերը, ճարպեր, ածխաջրածնային բաղադրութիւններ կամ փրոթէիններ, կը կազմուին

Շար.ը էջ 18

# ՀԱՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՇՐՋՈՒՆ ԴԱՍԱԽՕՍԻՆ ՇԻՋՈՒՄԸ

*Շարունակուած էջ 7-էն*

*յագիտական ժողովրդական լսարաններէն» որոնց մեծամիւ հասարակութիւն մը ներկայ կը գտնուէր, փրոֆ. Գէորգ Խրլոբեան կ'ընդառաջէր եւ կը դասախօսէր նաեւ հայրենաշունչ ոգիով միութենական ձեռնարկներու իր նախորդին՝ փրոֆ. Մօրուս Հասրաթեանի օրինակով: Լիբանանի հայ գաղութին մշակութապէս ծաղկեալ շրջանն էր ( 1968», երբ հասարակութեան կարեւոր զանգուած մը հայագիտութեան նուիրուած ձեռնարկներով հայ մշակոյթէն, հայ իմացական ժառանգութենէն, պատմութենէն ծարաւ մը յագեցնելու ներքին պահանջք մը կը զգար...:*

*Անմոռանալի ձեռնարկ մը կը մնայ, որպէս գրական եղելութիւն, լիբանանահայ գաղութի մշակութային պատմութեան եւ Հայկազեան Համալսարանի անցեալին համար «Սփիւռքահայ Գրականութեան Շաբաթը», փրոֆ. Գէորգ Խրլոբեանի նախաձեռնութեամբ, հայագիտական երեք ամպիոններու հովանաւորութեամբ՝ Հայկազեան, Սէն Ժոզէֆ եւ Հիւսիսեան ու Լիբանանահայ մտաւորականութեան մասնակցութեամբ:*

*Այնուհետեւ, փրոֆ. Գէորգ Խրլոբեան շարունակեց շրջուն հայագէտ դասախօսի հայապահանջման ծառայող առաքելութիւնը:*

*Բացի Պուէնոս Այրէսի, Տիթրոյթի Ուէյն, Գալիֆորնիոյ Լա Վըրնի համալսարաններու հայագիտական ամպիոններու վարիչ եւ դասախօս ըլլալէ, հայագիտական դասախօսութիւններով հանդէս եկած է Գանատայի, Եգիպտոսի, Սինկափուրի, Արժանթինի գիտական եւ մշակութային կեդրոններուն մէջ: Շրջուն դասախօսի հանգամանքին նպաստած է անգլերէն լեզուի իմացութիւնը:*

*1986-ին Լա Վըրնի Համալսարանը նշելով փրոֆ. Գէորգ Խրլոբեանի գիտական գործունէութեան 35-ամեակը պատուոյ դոկտորի կոչումը տուաւ:*

*Հայաստանի մէջ թէ արտասահման շրջելով երկրէ երկիր, քաղաքէ քաղաք հայագիտութիւնը իր հետ տարաւ հոն ուր որ գնաց, բաշխեց հայ պատմութենէն եւ հայ մշակոյթէն անշիջանելի լոյսը եւ հայ միտքի դարաւոր ժառանգութիւնը եւ անոնց նուիրուած ուսումնասիրութիւններու հայագիտական մնայուն վաստակով փակեց իր աչքերը՝ շիջելով հեռաւոր Ամերիկայի անհարազատ ափերուն վրայ...:*

# ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆ

*Շարունակուած էջ 13-էն*

*թիւններ եւ խմբերգեր, նոյնիսկ մանկապարտէզի աշակերտները յաղթանակի գիտակցութեան հպարտութեամբ ոգեկոչեցին իրենց Վարդանի թոռները ըլլալու իրողութիւնը, երգեցին նոյն հպարտութեամբ եւ քաջութեան վարակիչ զգացումով, օրուան դերակատարները բոլորն ալ արդարացուցին իրենց ուսուցիչներուն աշխատանքը: Վերջապէս սպասուած պահը հասաւ, ծնողքներ, աշակերտներ, հիւրեր բոլորը անհամբեր կը սպասէին ներկայացումին, ուր երրորդ դասարանի փոքրեր պիտի ներկայացնէին Վարդանանց ճակատամարտի նախօրեակին Հայաստանի մէջ տիրող կացութիւնը եւ ճակատամարտի պատրաստութիւնը, ապա բծախնդրութեամբ կատարած էր դերակատարներու ընտրութիւնը բոլոր տղաքն ալ լաւապէս կը ներկայացնէին իրենց վստահուած բաժինները, իսկ աղջիկները յստակ եւ հասկնալի երկլեզու խօսեցան եւ պատմեցին պատահարները նախապատրաստելով ներկաները բեմադրութեան:*

*Հետաքրքրական էր բոլոր տղոց աշխոյժ եւ ուրախ ներկայութիւնը բեմին վրայ, ինչպէս Յովիկ Գազանճեան, Քրիստ Պաղտատլեան եւ Ճորճ Թերզեան, անոնք վարժ դերասաններու նման կը վարուէին, կարծես սովորական իրենց կեանքէն բաժին մը ըլլար, նոյնն էր պարագան Շիրակ Սթամպուլեանին՝ այս տարուան Վարդանը, համարձակ Երէցը՝ Յակոբ Սինանեան ճիշտ կրօնաւորի յարմար ոճով կը կատարէր իր դերը, յատուկ էր Միշէլ Քիւրքճեանը Վարդանի աղջկան դերով, որ մարմնացուց տիպար հայ աղջիկը իր նազելի, ամօթխած եւ գիտակից կեցուածքով: Թատրոնի յուզիչ աւարտին նահատակ հայ հերոսներու դիակներուն մէջ իր զաւակը կը փնտռէր, սքանչելի էր ութնամեայ այս ամերիկածին հայ մանուկի դերակատարութիւնը, կատարելապէս հասկցած էր հերոս մօր հոգեվիճակը եւ իրական յուզումով զաւկին դիակը կ'որոնէր արցունքներ խլելով ներկաներու աչքերէն, ապա տեսարանը ամբողջացուց Ռիթա Պետրոսեան մեներգելով «Աւարայրի Պլպուլը»: Ան կը մեկնաբանէր երգը իւրաքանչիւր բառին տալով իր իմաստը ձայնի ելեւէջներով ու դէմքի արտայայտութիւններով... խոստմնալից նոր սերունդ...:*

*Որպէս ուսուցիչ, ծնողք, դաստիարակ եւ սերունդ պատրաստող՝ բոլորս հոգեկան մեծ գոհունակութիւն ապրեցանք:*

*Հանդիսութեան աւարտին վարժարանիս տնօրէնուհի՝ Քոյր Լուսիա հոգեկան մեծ ուրախութեամբ ողջունեց աշակերտներու նուաճումները, եւ յորդորեց զանոնք քալելու Վարդանի եւ քաջ նահատակներու ուղիով, չեշտելով որ անոնց յիշատակը անմոռաց եւ անմահ պիտի մնայ այնքան ատեն որ մենք կը շարունակենք մնալ հայ եւ քրիստոնեայ, ապա շնորհաւորեց ծնողներն ու ուսուցիչները, որոնք մղիչ ուժն են իրագործուած ծրագիրներուն:*

*Յատուկ շնորհակալութեան արժանի են օրուան պատասխանատու ուսուցչուհիները՝ տիկ. Մարօ Գույումճեան եւ երաժշտութեան ուսուցչուհի՝ տիկ. Վարդուհի Պաղտասարեանը, նաեւ համակարգիչի դասատու պրն. Արա որ հանդիսութեան տեւողութեան* Power Point *ծրագիրով կը ցուցադրէր Վարդանանք ճակատամարտի յատուկ նկարներ, ստեղծելով օրուան պատշաճ մթնոլորտ հանդիսասրահէն ներս:*

*Հանդիսութիւնը փակուեցաւ Տէրունական աղօթքի երգեցողութեամբ:*

*Մինչ աշակերտները կը բաժնուէին սրահէն՝ բոլորին մտքերն ու հոգիները համակուած էին Աւարայրի Արծիւներու քաջութեամբ եւ վճռակամութեամբ:*

# ՓՐՈՖ. ԳԷՈՐԳ ԽՐԼՈԲԵԱՆԻ ՄՏԱԾՈՂՈՒԹԵՆԷՆ

*Շարունակուած էջ 7-էն*

*տեղի ունեցող իրողութիւններից, ինչպէս դարբինը՝ դարբնութիւնից եւ հիւսնը՝ հիւսնութիւնից: Քանի որ մարդն արուեստից առաջ գոյութիւն ունի, ուստի արուեստը չի լինի, եթէ նախ մարդը չլինի: Հետեւաբար պէտք է ասել, որ արուեստը մարդուն յարմարեցուած է ոչնչից»:*

### *ՇԻՐԱԿԱՑԻԻ ՄԱՍԻՆ*

*Հայրենասէր գիտնական Շիրակացին գիտակցում էր, որ իր քաղաքական ինքնուրոյնութիւնն ու սեփական գոյութիւնը պահպանելու համար պայքարի դուրս եկած ժողովրդի համար անհրաժեշտ էր զինուել ոչ միայն ռազմականապէս, այլեւ հոգեպէս, որ նրան անհրաժեշտ է մարտունակ ու հարուստ մշակոյթ:*

*Եթէ հայ մարտիկը օտար բռնակալի դէմ կռւում էր սրով, ապա հայ առաջաւոր մտաւորականութիւնը իր գրչով մասնակցում էր այդ ահեղ պայքարին: Անանիա Շիրակացին եւս, այլ հայրենասէր գիտնականների հետ ակտիւօրէն մասնակցում էր բռնակալական գաղափարախօսութեան դէմ ծաւալուած այդ պայքարին:*

*Շիրակացին օտար նուաճողների դէմ պայքարելու համար օգտագործում է բոլոր հնարաւոր առիթները, այդ անում է իր տիեզերագիտական աշխատութիւններում, տոմարագիտական երկերում, «Ժամանակագրութեան» մէջ եւ նոյնիսկ թուաբանական խնդիրների միջոցով: Նրա հայրենասիրութիւնը սերտօրէն շաղկապուած է իր գիտական գործունէութեան հետ:*

### *ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻԻ ՄԱՍԻՆ*

*Նարեկացին համոզուած է, որ քանի իւրաքանչիւր անհատ, յատկապէս հումանիստ մարդիկը իրեն պատասխանատու է համարում անցեալում եւ ներկայում կատարուած չարիքների համար, ապա անհատ մարդիկ երջանիկ լինել չեն կարող, եթէ հաւաքականութեան միւս անդամները դժբախտ են: Հասարակութեան հաւաքական փրկութիւնը ապահովելու համար պատմութիւնը միշտ էլ կարիք ունի ինքնազոհ դանկոների, որոնք իրենց սիրտը պոկած լուսաւորեն ու առաջնորդեն լայն զանգուածներին: Նարեկացին այդ ձգտում է կատարել իր ստեղծագործութեամբ, որն ինքը համարում է մարդկութեան փրկութեան համար իր կողմից կատարուած «բանական զոհաբերութիւն», «անարիւն զոհաբերութիւն», «բանական նուէր»:*

*Եթէ մարդու գործունէութիւնը, ստեղծագործութիւնը ազատագրի, փրկի, երջանկացնի հաւաքականութեան անդամներին, ապա վերջիններիս միջոցով, վերջիններից յետոյ կը փրկի նաեւ անհատը, ղեկավարը, մարտիկ հերոսը: Խտացուած ձեւով ու միջնադարեան մտածելակերպին բնորոշ եղանակով Նարեկացին պաշտպանում է «մէկը բոլորի համար եւ բոլորը մէկի համար» կոլեկտիվիստական սկզբունքը: Ղեկավարը, գրողը, իմաստասէրը իր ինքնահաստատումը, իր փրկութիւնը, իր մեծութիւնը տեսնում է զոհաբերութեամբ կատարուած իր գործուն էութեամբ հաւաքականութիւնը կատարելագործելու, փրկելու մէջ: Իր փրկութիւնը, մեծութիւնը նա տեսնում է իր ընթերցողների վեհացման մէջ:*

*Նարեկացու համար նոյնիսկ իմաստասիրական մակարդակի բարձրացած արուեստը սէր է, համակրանք, հակում դէպի գեղեցիկը, բարին, կատարեալը: Արուեստի քուրմերը ուրախանում են, որ գոյութիւն ունի մարդը, մարդկային համերաշխ հաւաքականութիւնը: Նրանք ուրախանում ու բաւականութիւն են ստանում այն փաստից, որ իրենցից բացի գոյութիւն ունեն մարդիկ, որոնց համար իրենք ստեղծագործում են, որոնք արժէքաւորում են իրենց գործերը եւ որոնց գեղագիտական պահանջմունքները կարողանում են իրենք բաւարարել: Այսպիսով, Նարեկացու խորհրդապաշտական, միստիկ մեկուսացումը թուացող է, խիստ արտաքին: Նա մեկուսանում է ինքն իր մէջ, մարդկային էութեան մէջ, որպէսզի կարողանայ լաւագոյնս ծառայել մարդկութեան փրկութեան գործին:*

*Միջնադարեան տիրող վարդապետութիւնը սիրոյ զգացականեւ իմացական տեսակների տարբերութիւնները հասցրեց բեւեռացման մակարդակին, նրանց միջեւ անջրպետ ստեղծեց ու բացարձականացնելով հոգեւորը՝ թերագնահատեց զգայականը: Հայ իրականութեան մէջ Մովսէս Խորենացին գրեթէ ամբողջութեամբ պաշտպանեց Պղատոնեան հարցադրումը, որը շարունակեց Գրիգոր Նարեկացին: Ինչպէս տեսանք, Նարեկացին հոգեւոր սիրոյ մէջ տեսնում է աստուածասիրութիւնն ու մարդասիրութիւնը: Իսկ զգայական սէրը տարբեր սեռերի միջեւ եղած փոխադարձ զգացմունքն է, յարաբերութիւնը: Այն զգայական աշխարհում գոյութիւն ունեցող ամենավեհ զգացմունքներից մէկն է: «Արդ չիք յերկրի պատուակագոյն եւ առաւել քան զսիրոյ առն եւ կնոջ», «Այս եւ ի մարմնական սիրոյ յայտ գայ, զի ուր սուրբ սէր բնակէ՝ ծնողական կամ ամուսնական եւ որ ըստ այսմ, ոչ գետք կարեն խափանել, եւ սուր եւ ոչ հուր եւ ոչ մահ»: Սէրը մեծ ուժ է: Այն ոչ միայն կարող է յաղթահարել տարերային վտանգներն ու դժուարութիւնները, մահը, այլեւ կարող է մարդկանց փոխանցել գերբնական ուժ: «վասնզի ոչինչ արգելու գնա (զսիրահարս» ոչ հեռաւորութիւն տեղւոյ, ոչ թշուառութիւն ճանապարհի, ոչ լեռան բրացեալ, ոչ դաշտ տօթագին, ոչ ծով լայնածաւալ, ոչ քաղաք պարսպեալ, ոչ դղեակ ամրագոյն, ոչ աշտարակ անպարտելի, ոչ ազխեալ դրունք, ոչ երկիւղ պահպանաց, այլ զամենեքումբք քայլեալ աներկիւղ համարձակութեամբ առ առփելին հասանէ եւ զգար ցանկութիւն կատարէ«: Սէրը ներգործում է մարդու ամբողջ էութեան վրայ ու տիրապետում նրա վարքին ու ներքնաշխարհին: Սիրոյ այդպիսի էութիւնը բնականաբար ենթադրում է նաեւ սիրող կողմերի՝ յատկապէս կնոջ համապատասխան արժէքաւորում:*

*Նարեկացին կնոջը եւայական մեղքից ու յանցանքից ազատելու համար առաջ է քաշում այն տեսակէտը, որ եթէ մարդկութիւնը դրախտից վտարուեց կնոջ պատճառով, ապա նա փրկութեան հնարաւորութիւն ստացաւ կնոջ միջոցով աշխարհ եկած Աստուածորդիով: Տիրամայրը, Աստուածամայրը մարդկութեան առաջ վերականգնեց կնոջ հեղինակութիւնը, տիեզերական դիրքը եւ առաջին հերթին կանացիութեան արժէքը:*

# ՄԱՐԶԱԿԱՆ

## ԱԲՐԱՀԱՄ-ԴԻՐԵԼ ՄԵՆԱՄԱՐՏԸ ՆՇԱՆԱԿՈՒԵԼ Է ՄԱՐՏԻ 27-ԻՆ



*Մարտի 6-ին Գալիֆորնիայում կայանալիք Արթուր Աբրահամի եւ Անդրէ Դիրելի մենամարտը յետաձգուել էր վերջինիս վնասուածքի պատճառով: Ամերիկացի բռնցքամարտիկը մարզումների ժամանակ վնասել էր մէջքը:*

*Եվ ահա երկրորդ միջին քաշային կարգի 6 ուժեղագոյն բռնցքամարտիկների մրցաշարի կազմակերպիչները որոշել են մենամարտը տեղափոխել Մարտի 27 այն հաշուարկով, որ մինչ այդ Դիրելը կապաքինուի: Մրցամարտի անցկացման ստոյգ վայրը դեռեւս յայտնի չէ, սակայն այն նախատեսւում է կազմակերպել Գալիֆորնիայի մարզասրահներից մէկում:*

*Մենամարտի յետաձգման լուրը հիասթափեցրել է Արթուր Աբրահամին, որն արդէն Գալիֆորնիայում նպատակասլաց մարզումների միջոցով նախապատրաստւում էր այդ մենամարտին: Նրա պրոմոութեր Վիլֆրիդ Զաուերլանդը նշել է, որ մենամարտի ողջ նախապատրաստութիւնը կարող է ժամանակի անտեղի կորստի վերածուել: Սակայն այլ ելք չկայ, քանի որ վնասուածքները միշտ էլ կարող են հետապնդել մարզիկներին:*

*Իսկ ահա Արթուր Աբրահամի 67-ամեայ մարզիչ Ուլի Վեգները կասկածի տակ է առել Անդրէ Դիրելի վնասուածք ունենալու փաստը. «Դիրելի թիմը հոգեբանական խաղ է սկսել, ինչը նրանց ոչ մի առաւելութիւն չի տայ: Արթուրը չի կորցնի իր նպատակասլացութիւնը եւ կը շարունակի նոյն ջանասիրութեամբ նախապատրաստուել յառաջիկայ մրցումներին: Ինչպէ՞ս կարող է Դիրելը նախապէս իմանալ, որ մարտի 27-ին լրիւ ապաքինուած կը լինի ու կը կարողանայ ռինգ դուրս գալ: Վնասուածք ունեցող մարզիկը չի կարող դա անել»:*

## ՀԱՅ ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻԿՆԵՐԸ ՄԵՏԱԼԱԿԻՐ

*Բուլկարական Եամպոլ քաղաքում աւարտուեց սիրողական բռնցքամարտի հնագոյն մրցաշարերից մէկը՝ «Ստրանջայի գաւաթի» խաղարկութիւնը, որին մասնակցեցին մեծ թւով ուժեղագոյն բռնցքամարտիկներ, այդ թւում աշխարհի գործող 5 ախոյեաններ:*

*Մեր բռնցքամարտիկները յաջող ելոյթ ունեցան այս սուպերմրցաշարում՝ երեք քաշային կարգերում նուաճելով երկու մեդալ:*

*48 կգ քաշային, Եւրոպայի ախոյեան Յովհաննէս Դանիէլեանը նախնական փուլերում յաղթելով իր բոլոր մրցակիցներին, մտաւ եզրափակիչ, որտեղ նա պէտք է հանդիպեր ուզպեք բռնցքամարտիկ Եասուրբեկ Լատիպովի հետ: Սակայն վերջինս չներկայացաւ մրցամարտին, եւ մեր մարզիկը ինքնաբերաբար նուաճեց ոսկէ մեդալ: Իսկ մրցաշարի աւարտից յետոյ կազմակերպիչները լաւագոյն տեխնիկա ունեցող բռնցքամարտիկ ճանաչեցին հենց Յովհաննէս Դանիէլեանին:*

*Էդուարդ Համբարձումեանը (64 կգ) միայն կիսաեզրափակիչում պարտուեց իր մրցակցին եւ արժանացաւ պրոնզէ մեդալի: Մեր երրորդ մասնակիցը՝ ծանր քաշային Բագրատ Օհանեանը, առաջին իսկ մրցամարտում պարտութիւն կրեց եւ դուրս մնաց պայքարից:*

*Հայաստանի աւագ տարիքային պատանիների հաւաքականը (գլխաւոր մարզիչ Ֆեդյա Ալեքսանեան) Կալինինգրադում մասնակցեց միջազգային թիմային մրցաշարի: Մեր պատանի բռնցքամարտիկները յաղթեցին Պելառուսի ու Գերմանիայի հաւաքականներին, սակայն պարտուեցին Ռուսաստանի խումբին եւ ընդհանուր հաշուարկով գրաւեցին 2-րդ տեղը:*

### ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՂԹԱՆՔ

*Ընկ. ՆԱԶԱՐԷԹ ԱԶԱՊԱՀԵԱՆ վերջերս սրտի վիրաբուժական գործողութեան մը ենթարկուած է Huntington Memorial հիւանդանոցին մէջ: «Մասիս»ի խմբագրութիւնն ու աշխատակազմը շուտափոյթ եւ կատարեալ ապաքինում կը մաղթէ իրեն:*

### ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՂԹԱՆՔ

*ԱՒՕ ՄԱԿԱՐԵԱՆ ենթարկուած է վիրաբուժական գործողութեան մը եւ այժմ կը բոլորէ իր կազդուրման շրջանը: Այս առթիւ Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Սիմա Կիրակոսեան շուտափոյթ ապաքինում կը մաղթեն իրեն:*

### ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

*ՅՈՎԻԿ ԼԱԶԻՆԵԱՆ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդին կողմէ պարգեւատրման առիթով՝ Տէր եւ Տիկ. Գէորգ եւ Լուսին Գալուստեան կը շնորհաւորեն զինք եւ առ այդ $50 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:*

### ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր,
եւ կը ցանկանաք զանոնք նուիրել
Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝
հաճեցէք կապ պահել մեզի հետ:

**G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104**
**Norserount@sbcglobal.net**

## ՀԱՅԱՍՏԱՆ-ՊԵԼԱՌՈՒՍ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԿԸ ԿԱՅԱՆԱՅ ԱԹԱԹՈՒՐՔԻ ԱՆՈՒԱՆ ՄԱՐԶԱԴԱՇՏՈՒՄ

*Մարտի 3-ին ՀՀ ֆութպոլի ազգային հաւաքականը Պելառուսի ֆութպոլի հաւաքականի հետ ընկերական հանդիպում կ'անցկացնի, որ տեղի կ'ունենա Թուրքիայի Անթալիա քաղաքի Աթաթուրքի անուան մարզադաշտում, ժամը 19:00-ին:*

*ՀՀ ֆութպոլի երիտասարդական հաւաքականի գլխաւոր մարզիչ, դանիացի Ֆլեմինգ Սերիցլեւն այսօր հրապարակել է ՀՀ ֆութպոլի երիտասարդական հաւաքականի կազմը Մարտի 3-ին Եւրոպայի ֆութպոլի երիտասարդական առաջնութեան ընտրական մրցաշարի շրջանակում Իրլանդիայի մայրաքաղաք Դուբլինում կայանալիք Իրլանդիայի եւ Հայաստանի ֆութպոլի երիտասարդական հաւաքականների խաղին: Այս հանդիպումը տեղի կ'ունենայ Դուբլինի «Թելագտ» մարզադաշտում, ժամը 23:30-ին:*

*ՀՀ ֆութպոլի երիտասարդական հաւաքականը այս հանդիպմանը նախապատրաստուելու համար Փետրուարի 25-ից մինչեւ Մարտի 1-ը Երեւանի «Ռեժինէ» հիւրանոցում ուսումնամարզական հաւաք կ'անցկացնի, որի ընթացքում, կը մարզուի Աւանի ՀՀ ֆութպոլի հաւաքական խումբերի տեխնիկական կենտրոնի մարզադաշտում: ՀՀ ֆութպոլի երիտասարդական հաւաքականի կազմում ընդգրկուած են դարպասապահներ՝ Էդվարդ Յովհաննիսեան («Փյունիկ» Երեւան), Գէորգ Պրազեան («Արարատ» Երեւան), պաշտպաններ՝ Արտաշէս Առաքելեան («Կիլիկիա» Երեւան), Գագիկ Դաղբաշեան («Բանանց» Երեւան), Լեւոն Հայրապետեան («Համբուրգ», Գերմանիա), Արտակ Եդիգարեան («Փիւնիկ»), Յովհաննէս Համբարձումեան («Բանանց»), կիսապաշտպաններ՝ Դաւիթ Մանոյեան («Փիւնիկ»), Արթուր Եուսպաշեան («Փիւնիկ»), Էդգար Մալաքեան («Փիւնիկ»), Մասիս Ոսկանեան («Բրիւգգէ», Բելգիա), Արտակ Դաշեան («Մետալուրգ» Դոնեցկ, Ուքրաինա), յարձակուողներ՝ Գէորգ Ղազարեան («Փիւնիկ»), Հրաչ Եազան («Ստանդարդ», Բելգիա), Ալբերտ Թադեւոսեան («Փիւնիկ»), Յովհաննէս Գոհարեան (ԲԱՏԷ, Բելառուս), Գէորգ Բադալեան («Բանիկ-Մոստ», Չեխիա), Միհրան Մանասեան («Փյունիկ»):*

## ՍՐՏԻ ՏԱԳՆԱՊԸ ՆԱԽԱՏԵՍԵԼՈՒ ԵՒ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԻՋՈՑ ՄԸ

*Շարունակուածէջ 16-էն*

*որոշ արտաքսման նիւթեր, որոնց կարգին բնամիզային թթուն. եթէ կենսաքիմիական փոխանակումներու խանգարման մը հետեւանքով բնամիզային թթուն կուտակուի մեծ քանակութեամբ, յօդատապ կ'առաջանայ. յօդատապ ունեցող անձերու մօտ, սրտերակային շնչերակները յաճախ կանխահասօրէն կը խանգարուին. այնպէս որ բնամիզային թթուի սակը արեան մէջ կարեւոր ցուցանիշ մըն է:*

### ՄԱՐՄՆԻ ՁԵՒԸ

*Այս ազդակին եւ սրտերակային վտանգին բոլոր կապերը ծանօթ չեն այսուհանդերձ, եթէ բաղդատելու ըլլանք հիւանդութեան ենթակայ եղող հարիւր երիտասարդներու խումբ մը անկէ զերծ եղող հարիւր երիտասարդներու խումբի մը, քանի մը հետաքրքրական իրողութիւններ կը հաստատենք: Հիւանդութեան ենթակայ եղողներու խումբին մէջ, երկու անգամ աւելի է թիւը մկանուտ, յարձակողական խառնուածքի եւ պայքարի ոգիի տէր անհատներու, քան առողջ խումբին: Վիճակագրական տուեալները փաստած են, որ մարմնի ձեւը ուղղակի կապուած է սրտի տագնապներու հանդէպ կանխատրամադրութեան:*

### Ի՞ՆՉ ԸՆԵԼ

*Քսան կամ երեսուն տարեկանին, մարդ ընդհանրապէս շատ քիչ կը հետաքրքրուի իր առողջութեամբ, բայց տեղեկութիւնները, որոնք տրուեցան արժանի են ուշադրութեան:*

*Եթէ անցուցած էք քառասունը, եթէ ընտանիքի մէջ գոյութիւն ունեցած են նախընթացներ եւ ձեր կազմն ալ ձեզ կը նախատրամադրէ սրտերակային հիւանդութեան, անհրաժեշտ է որ յստակօրէն գիտնաք թէ իսկապէս սպառնալիքի տա՞կ էք թէ ոչ: Եթէ այո, ձեր յառաջացեալ տարիքը ոչինչով կը պակսեցնէ յաջող դարմանումի մը յոյսը, ենթադրելով նոյնիսկ որ հիւանդութիւնը շատ առաջացած է, եւ որ դարմանման կը սկսիք տագնապէս քանի մը ամիս առաջ միայն, դարձեալ բոլոր հաւանականութիւնները ունիք գայն շատ թեթեւ անցընելու: Այս տեսակի պատահաներու կանխատրամադրութիւն ունեցող մարդոց կիներուն մասնաւոր կոչ կ'ուղղեմ. դուք ձեր ամուսինը լաւ կը հասկանք որեւէ մէկէ աւելի: Իր ամուսինը ժամանակին դարմանել տուող կինը կը պահպանէ իր սեփական ապահովութիւնը եւ իրեններուն երջանկութիւնը ապագայի հաշւոյն, որովհետեւ իր ամուսնին սրտի տագնապը որեւէ պարագային կրնայ նախատեսել եւ կանխել:*


## ՎԱՐՉՈՒ ԳՐԱՍԵՆՆԵԱԿՆԵՐ

**1060 North Allen Avenue**
**Pasadena, CA 91107**

Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով:

Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ԵՒ ՅՈՒՇ ՑԵՐԵԿՈՅԹ ԼՈՒՍԱՀՈԳԻ ՇՆՈՐՀՔ ՊԱՏՐԻԱՐՔ ԳԱԼՈՒՍՏԵԱՆԻ

*Կիրակի, Մարտ 7, 2010, առաւօտեան ժամը 10:30ին, կամօքն Աստուծոյ Փասատինայի սբ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան պաշտօն, Կ. Պոլսոյ նախկին պատրիարք հոգելոյս ամենապատիւ Տ. Շնորհք Արք. Գալուստեանի հոգիի խաղաղութեան համար, անոր վախճանման քսանամեակին առիթով:*

*Հոգեհանգիստը խնդրած են եկեղեցւոյ հոգաբարձութիւնը եւ գաղութիս մէջ գործող Պոլսահայերու Միութիւնը: Հոգեհանգստեան պաշտօնին եւ յուշ ցերեկոյթին պիտի նախագահէ Թեմիս բարեջան առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան:*

*Այդ օր, Ս. Պատարագի, Արեւագալի եւ հոգեհանստեան պաշտօնի հոգեպարար երգեցողութիւնը պիտի կատարէ Արեւմտեան Թեմի առաջնորդարանի «Խաչատուրեան» արանց բազմաձայն երգչախումբը, ղեկավարութեամբ բարեշնորհ Ստեփան Սրկ. Կէօզիւմեանի:*

*Անմահանուն Շնորհք Պատրիարք Գալուստեան եղած է Երուսաղէմի Միաբանութեան անդամ, Արեւմտեան Թեմէն ներս ծառայած է որպէս Սբ. Յակոբ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ, ապա որպէս Թեմի Առաջնորդ: Ան կը հանդիսանայ Հայց. Առաքելական եկեղեցւոյ լուսապայծառ դէմքերէն մին: Իր քարոզախօսութեամբ, հրատարակած բազմաթիւ յօդուածներով եւ գիրքերով եւ կազմակերպչկան բազմաթիւ իրագործումներով, Ամենապատիւ Տ. Շնորհք Պատրիարք Գալուստեան իր ուրոյն տեղը եւ դերը ունի մեր եկեղեցւոյ վերջին հարիւր տարուայ կեանքին մէջ:*

*Հոգեհանգիստէն ետք, ժողովուրդը սիրով հրաւիրուած է պատրիարք հօր հոգիին համար պատրաստուած հոգեճաշին:*

*Օրուայ քարոզիչն է Թեմին նախկին առաջնորդ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեանը, իսկ յուշ ցերեկոյթին ելոյթ պիտի ունենայ ծուխիս հովիւ Արժ. Տ. Սարգիս Աւ. Քհնյ. Փեթոյեան եւ Արեւմտեան Թեմի բազմավաստակ կղերական, Արժ. Դոկտ. Զաւէն Աւ. Քհնյ. Արզումանեան եւ Պոլսահայ Միութեան պատասխանատուներ:*

*Այդ օր պիտի գործադրուի հոգելոյս պատրիարքին յիշատակին վայել գեղարուեստական բարձրորակ յայտագիր մը, մասնակցութեամբ Խաչատուրեան երգչախումբի եւ Պոլսահայ Միութեան մշակութային յանձնախումբի:*

*Սիրով կը հրաւիրուի հայ ժողովուրդը ներկայ գտնուելու Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիին մէջ կատարուելիք հոգեհանգստեան պաշտօնին եւ յարգելու համար յիշատակը բազմաշնորհ կղերական, հայ եկեղեցւոյ անկրկնելի մեծութիւններէն՝ Ամենապատիւ Տ. Շնորհք պատրիարք Գալուստեանի:*

*Մանրամասնութեանց համար հեռաձայնել եկեղեցւոյ գրասենեակը՝ (626) 449-1523:*

*ՎԱՀԷ ՍՐԿ. ՔԱՐԽԼԸԹԵԱՆ*

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ




*ՅԱԿՈԲ ՍԱՐԳԻՍԻ ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻ*
*Մահուան երկրորդ տարելիցին*
*ՏԻՐԱՄԱՅՐ ԱՆԺԵԼ ԹԱՄՈՅԵԱՆ-ՅՈՎԱԿԻՄԵԱՆ*
*Մահուան առաջին տարելիցին*

*առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 28 Փետրուար 2010-ին Պըրպէնքի Արեւմտեան Թեմի Առաջնորդարանի եկեղեցւոյ մէջ: Հանգուցեալներուն յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:*

*Սգակիրներ՝*
*Որդիները՝ Տ. Վահան Ծ. Վրդ. Յովակիմեան*
*Տէր եւ Տիկ. Ստեփան եւ Ժուլիէթ Յովակիմեան եւ իրենց զաւակները՝ Քրիսթին եւ Դանիէլ*
*Դուստրը՝ Լուսին Պարազեան եւ զաւակները՝ Ազատ, Վահան եւ Անժելա:*
*Եւ համայն Յովակիմեան, Պարազեան, Թորոսեան, Յովսէփեան, Գաբրիէլեան եւ Տատայեան ընտանիքները:*

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
massis2@earthlink.net

## ՄԱՀ ԷԴԻԿ ՆԱԶԱՐԵԱՆԻ



*Խոր վիշտով կը գուժենք վաղահաս մահը մեր զաւակին՝ ԷԴԻԿ ՆԱԶԱՐԵԱՆԻ որ պատահեցաւ Փետրուարի 20ին, Թեհրանի մէջ: Թաղումը տեղի ունեցաւ Փետրուար 23ին: Հանգուցեալի յիշատակին Կիրակի Փետրուար 28ին Կելնտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ Ս. Պատարագի աւարտին պիտի կատարուի հոգեհանգստեան պաշտօն որմէ ետք հոգեճաշ պիտի մատուցուի «Ամպրոզիա» ճաշարանին մէջ:*

*Սգակիրներ՝*
*Ծնողները՝ Աւետիս եւ Սառան Նազարեաններ, զաւակունք եւ համայն հարազատները:*

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*ԷԴԻԿ ՆԱԶԱՐԵԱՆԻ վաղաժամ մահուան առթիւ մեր ցաւակցութիւնները կը յայտնենք հանգուցեալի այրիին, զաւակներուն, վշտահար ծնողներուն, ի մասնաւորի Թերթիս տարիներու աշխատակից Աւետիս Նազարեանին եւ բոլոր հարազատներուն:*

*«Մասիս»*

## ԿԱՐԱԲԱԼԱ... ԻՐԱԿԱՆ ԼԵԳԵՆԴԸ...

*Շարունակուած էջ 14-էն*

*ուել չփացած երկրպագուի անյարգի եւ անկոչ ընկերակցութիւնից: Հէնց Աբովեան փողոցի վրայ Կարաբալան հաշուեյարդար է տեսնում Թուրքի հետ, դանակահարելով սպանում նրան: Կարաբալային բնակաՆաբար ձերբակալում են, բանտարկում: Պատմում են, որ Եղիշէ Զարենցի հետ նոյն բանտախցում է եղել... Զարենցը նրան նուիրուած մի բանաստեղծութիւն ունի.*

Հագնում է նա
Մէկ մակինտոժ,
Մէկ էլ տեսար`
Զուլ ու փալաս,
Չգիտէի`
Արտի՞ստ է նա,
Թէ՞ ծաղիկ ծախող
Կարաբալա...

*Կարաբալան մեծ դեր խաղաց Զարենցի կեանքում, երբ նրան աւելի վաղ բանտից ազատեցին, քանի որ քաղաքական բանտարկեալ չէր, նա յաճախ էր բանտ գնում եւ պահակների միջոցով նամակներ էր բերում Զարենցից...*

*... Տարիներ անց, երբ վախճանուեց հայ բեմի ժամանակի ամենավառ աստղը՝ Արուս Ոսկանեանը, նրա շիրիմին ամէն առաւօտ միշտ մի անյայտ ձեռք մէկ կարմիր վարդ էր դնում... Կարաբալան չէր դադարել սիրել իր երազին:*

*- Երբ երեխայ ժամանակ չարաճճիօրէն վազում էինք յետեւից եւ կանչում Կարաբալա՜, Կարաբալա՜, ասում էր. «Ինչ Կարաբալա, Դարդոբալա՜, Դարդոբալա՜...»: Նա իսկական հայ էր, ուղնուծուծով հայ: Կարաբալա ածական անունն էր կրում դեռ արեւմտեան Հայաստանից... Կարա՝ կամ ղարա նշանակում է սեւ, բալա-ն երեխայ բառն է: Նա Թխամորթ էր եւ երեւի թէ այդ պատճառով նման մականուն էին տուել... Երեւանի նախկին քաղաքապետերից Համբարձում Գալստեանը շատ էր սիրում Կարաբալայի արձանը եւ յանձնարարութիւն տուեց նրա արձանը կանգնեցնել Աբովեան փողոցի ճիշտ այն հատուածում, ուր ժամանակին Կարաբալան ծաղիկ էր վաճառում... Կարաբալայի կերպարի մէջ ես հօրս էի տեսնում: Իրանում մի հայ չկար, որ Կարաբալայի արձանի հետ նկարուած չլինէր... Ամերիկեան դեսպանատնից ինձ մօտ եկան 15 հատ փոքր չափսերի Կարաբալայի բրոնզաձոյլ արձանիկներ պատուիրաեցին, երբ հարցրի թէ ի՞նչն է իրենց գրաւում ասացին, որ նրա մէջ մարդկային բան են տեսնում... Մարդիկ սիրեցին այս արձանը, իսկ ժամանակին ինձ քննադատում էին թէ՝ Կարաբալան մուրացկան է եղել եւ ես իզուր եմ նրա արձանը կանգնեցրել, մինչդեռ իրականութիւնն այլ էր..., հայեացքով իր ստեղծագործութիւնը գուրգուրելով ասում է Լեւոն Թոքմաջեանը:*

*Արժէքների խառնաշփոթ մեր ժամանակներում այս արձանի ճակատագիրը չբեկուեց: Փոխուել է միայն Կարաբալայի արձանի գտնուելու սկզբնական վայրը. Երեւանի նախկին քաղաքապետ Երուանդ Զախարեանին ուղղուած արձանի հեղինակի խնդրանքը անարձագանք չմնաց, երբ այդ տարածքում կատարւում էին Հիւսիսային պողոտայի կառուցման աշխատանքները, քանդակը բուլդոզերի տակ չգցելու համար տեղափոխուեց՝ անցնելով միւս մայթ...*

*Երեւանի կոլորիտային արձաններից իրական լեգենդ դարձած Կարաբալան կանգնած է Հանրապետութեան հրապարակից վերեւ տանող Աբովեան փողոցի աջ մայթին՝ իբրեւ մարդ էակի կողմից մարդու հանդէպ տածուող յաւերժական բարութեան խորհրդանիշ:*

*«Յոյս» Երկշաբաթաթերթ*
*Թեհրան*

www.massisweekly.com
Updated every Friday




Paid for by U.S. Census Bureau.